



Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19 փետրվարի, 2008 թ.

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական  
առաքելության զեկույց



Վարչավա  
30 մայիսի, 2008 թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I.	ԱՍՓՈՓՈՒՄ.....	1
II.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ.....	3
III.	ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.....	4
IV.	ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ.....	5
V.	ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ .....	6
VI.	ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ.....	7
VII.	ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ.....	9
VIII.	ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ .....	10
IX.	ԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ.....	12
	Ա.    ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ .....	12
	Բ.    ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ.....	13
	Գ.    ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՔԱՐՈԶԱՐՇԱՎՈՒՄ.....	14
	Դ.    ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ.....	16
X.	ԼՐԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ.....	17
	Ա.    ԻՐԱՎԱԿԱՆ ԵՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԴԱՇՏԸ.....	18
	Բ.    ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՈՆԻՏՈՐԻՆԳԸ .....	19
	Գ.    ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԴԻՄՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԲՈՂՈՔՆԵՐԸ.....	21
XI.	ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԲՈՂՈՔՆԵՐԸ.....	22
XII.	ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.....	23
XIII.	ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԸ.....	24
XIV.	ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՇՎԱՐԿԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ .....	24
	Ա.    ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ .....	24
	Բ.    ՀԱՇՎԱՐԿ .....	28
	Գ.    ԱՍՓՈՓՈՒՄ ԵՒ ՆԱԽԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ .....	29
XV.	ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	31
	Ա.    ՏԸՀ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ .....	31
	Բ.    ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ.....	32
	Գ.    ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՒ ԲՈՂՈՔՆԵՐ .....	33
	Դ.    ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ.....	35
XVI.	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	37
	Ա.    ԸՆԴՀԱՆՈՒՐ .....	38
	Բ.    ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ .....	38
	Գ.    ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ .....	38
	Դ.    ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ.....	38
	Ե.    ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ .....	39
	Զ.    ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ.....	40
	Է.    ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ .....	40
	Ը.    ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ .....	41

Թ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ.....	41
Ժ. ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՒ ԲՈՂՈՔՆԵՐ.....	42
ՀԱՎԵԼՎԱԾ՝ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	43
ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ՄԱՍԻՆ.....	44

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**19 փետրվարի, 2008 թ.**

**ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելության  
վերջնական զեկույց<sup>1</sup>**

**I. ԱՍՓՈՓՈՒՄ**

Հայաստանի Հանրապետությունում նախագահական ընտրությունները անցկացվեցին 2008 թվականի փետրվարի 19-ին: Ստանալով հրավերը՝ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) 2008 թվականի հունվարի 10-ին հիմնեց Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸԴԱ)՝ գնահատելու ընտրական գործընթացի համապատասխանությունը 1990 թվականի Կոպենհագենի փաստաթղթին, այլ միջազգային չափանիշներին, ինչպես նաեւ ազգային օրենսդրությանը եւ նրա կիրառմանը:

Թեեւ 2008 թվականի նախագահական ընտրությունները հիմնականում համապատասխանել են ԵԱՀԿ պարտավորություններին եւ միջազգային չափանիշներին նախընտրական շրջանում եւ քվեարկության ժամերին՝ որոշ պարտավորությունների նկատմամբ ի հայտ եկան լուրջ մարտահրավերներ՝ հատկապես ընտրությունների օրվանից հետո: Սա ժողովրդավարական ընտրությունների համար էական չափանիշների նկատմամբ ցուցաբերեց անբավարար հարգանք, եւ արժեզրկեց ամբողջ ընտրական գործընթացը: Մասնավորապես, քվեների հաշվարկում ի հայտ եկան հաշվետվության եւ թափանցիկության թերություններ, իսկ բողոքների եւ բողոքարկման ընթացակարգերը լիովին արդյունավետ չէին:

Մինչ ընտրությունների օրը շատ գրուցակիցներ մտահոգություն են արտահայտել հնարավոր հանցանքների առնչությամբ, իսկ ընտրական գործընթացի նկատմամբ գոյություն ունեւ հանրության վստահության ակնհայտ պակաս: Բարձրաստիճան պետական պաշտոնյաներ հայտարարություններ են արել՝ վստահեցնելով հանրությանն ընտրության ազատության եւ քվեի գաղտնիության մեջ, եւ ընդգծել են ընտրական իրավախախտումների համար սահմանված իրավական պատիժները:

Ընտրական օրենսգիրքը ամուր հիմքեր է ապահովում ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար. իրականացման թերությունները գլխավորապես իրավական դրույթները արդյունավետ եւ անկողմնակալ կիրառելու համար անբավարար կամքի դրսեւորման արդյունք են հանդիսանում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿՀՀ) ընտրություններն, ընդհանուր առմամբ, թափանցիկ կերպով է կազմակերպել: Ինը թեկնածուները գրանցվել են ներառական կերպով եւ առանց խտրականության՝ ընտրողներին տալով հստակ ընտրություն: Այնուամենայնիվ, գործող կառավարությունը, այդ թվում նաեւ վարչապետ Սերժ Սարգսյանը՝ իշխող Հանրապետական կուսակցության թեկնածու, եւ նախագահ Ռոբերտ Քոչարյանը զգալի առավելություն ունեին ընտրական հանձնաժողովների ղեկավար

<sup>1</sup> Սույն զեկույցի միակ պաշտոնական փաստաթուղթը հանդիսանում է անգլերեն տարբերակը:

պաշտոնների նշանակումների թվի մեջ, ինչը մտահոգություն է առաջացնում ընտրական վարչարարության անկախության եւ անկողմնակալության վերաբերյալ:

Թեկնածուներն անց են կացրել բազմաթիվ քարոզչական միջոցառումներ, մեծ մասամբ առանց խոչընդոտների: Իշխանությունները ջանքեր են գործադրել քարոզչական թույլատրելի մթնոլորտի ստեղծման ուղղությամբ: Մինչ հանրահավաքների մեծ մասն անց են կացվել խաղաղ պայմաններում, լարվածություն է առաջացել քաղաքական միջոցառումներին քաղաքացիների ազատ մասնակցության իրավունքի երբեմն տեղի ունեցած խախտումների, ինչպես նաեւ քարոզարշավի ակտիվիստների կամ կուսակցության սեփականության հանդեպ բռնության դեպքերի հետեւանքով:

Շատ տեղական ինքնակառավարման պաշտոնյաներ քարոզարշավ են ծավալել վարչապետ Սարգսյանի օգտին, ոմանք՝ պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում: Զեկույցվել են տեղական ինքնակառավարման մարմինների եւ հանրային սեկտորի աշխատակիցներին վարչապետ Սարգսյանի քարոզարշավի միջոցառումներին մասնակցության պարտադրման դեպքեր: Սա հակասում էր իրավական դրույթներին, աղավաղում էր կուսակցության եւ պետության տարանջատումը, մարտահրավեր նետում քարոզչություն իրականացնելու հավասար հնարավորություններին եւ մտահոգության առիթ տալիս, որ քաղաքացիները կարող են հատուցել իրենց ընտրության համար:

ԿՀՀ-ն եւ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային խորհուրդը (ՀՌԱԽ) չեն ապահովել, որպեսզի լրատվամիջոցները համապատասխանեն իրենց պարտավորություններին, եւ լրատվամիջոցների կողմնակալությունն ակներեւ է եղել: Վարչապետ Սարգսյանի՝ այդ թվում նաեւ նրա պաշտոնական պարտականությունների լուսաբանումը բարենպաստ լույսի ներքո նրան ոչ տեղին առավելություն շնորհեց: Ընդդիմադիր թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանն ունեցել է բացասական լուսաբանման մեծ ծավալ, այդ թվում Հանրային հեռուստատեսությամբ եւ ռադիոյով:

Քվեարկությունը մեծապես համապատասխան է եղել սահմանված կարգին: Դիտորդները այցելած ընտրատեղամասերի 95 տոկոսում քվեարկությունը գնահատել են որպես ընդհանուր առմամբ դրական: Այդուհանդերձ, որոշ տեղերում ակնառու են եղել սահաբեկման դեպքեր եւ գործընթացը մանիպուլյացիայի ենթարկելու փորձեր, եւ իշխանությունները աղեկվատ կերպով չեն արձագանքել ընտրությունների օրը եւ դրանցից հետո հայտնված այս խնդիրներին: Որոշ Տեղամասային ընտրական հանձնաժողովներ (ՏՀՀ) չեն ցանկացել գրանցել պաշտոնական բողոքներ:

Քվեների հաշվարկը գնահատվել է որպես «վատ» կամ «շատ վատ» այցելած ընտրատեղամասերի մոտ 16 տոկոսում: Դիտորդներն արձանագրել են հակասություններ քվեաթերթիկների վավերության որոշման մեջ, դժկամություն նշված քվեաթերթիկները ցույց տալու գործում, մի թեկնածուի քվեաթերթիկների վերագրում մեկ այլ թեկնածուին, արձանագրությունների ստորագրում մինչ հաշվարկի ավարտը, չլրացված արձանագրությունների ստորագրում, արձանագրությունների մեջ տվյալների փոփոխում, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով արձանագրությունների հանրային ցուցադրման ձախողման դեպքեր:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում (ԸՀՀ) արդյունքների ամփոփման գործընթացն, ընդհանուր առմամբ, լավ է իրականացվել՝ թեեւ դիտարկվել են մի շարք

Թերություններ: Դրանց թվում էին՝ ընտրական նյութերի ժամանումը չկնքված փաթեթներում, թեկնածուների վստահված անձանց կողմից ԸՀ գործառնությունների իրականացումը, ամփոփման սխալների նկատմամբ ոչ հետևողական մոտեցումը, ինչպես նաև դիտորդներին արձանագրություններ ուսումնասիրել թույլ չտալը: ՏՀ արդյունքների վերահաշվարկի բազմաթիվ պահանջներ են եղել, որոնցից ոմանք ԸՀ-ները մերժել են առանց հիմնավոր պատճառի: Ընդունված 159 վերահաշվարկի պահանջից իրականացվել է 135 ՏՀ արդյունքների վերահաշվարկ: Շատ դեպքերում ի հայտ են եկել անճշտություններ եւ սխալներ, որոնցից ոմանք հարցերի տեղիք են տալիս քաղաքական անկողմնակալության վերաբերյալ:

ԿՀ-ն գրանցել է նախընտրական բողոքների մեծ մասը, ինչպես նաև բազմաթիվ հետընտրական բողոքներ: ԿՀ-ի կողմից բողոքների վարումը թափանցիկ չի եղել: Հիմնականում բողոքների քննարկումը ԿՀ-ն կազմակերպել է ոչ պաշտոնական հանդիպումների ժամանակ, որոնց վստահված անձինք, դիտորդները եւ լրատվամիջոցները հրավիրված չեն եղել, եւ մերժել է դրանք առանց համապատասխան քննության: Արդյունքում թեկնածուներին չի շնորհվել պաշտպանության արդյունավետ միջոցներ: Վարչական դատարան բողոքներ ներկայացնելիս մասնակիցները հազվադեպ են օգտվել 2007 թվականի դեկտեմբերին սահմանված նոր ընթացակարգերից:

Փետրվարի 24-ին ԿՀ-ն հայտարարել էր, որ վարչապետ Սարգսյանը հաղթել էր ընտրություններում՝ ստանալով քվեների 52.8 տոկոսը: Պարոն Տեր-Պետրոսյանը ստացել էր քվեների 21.5 տոկոսը: ԿՀ անդամներից երկուսը արդյունքների պաշտոնական արձանագրությունը չէին ստորագրել: ԿՀ կողմից հրապարակված ՏՀ-ների արդյունքներում մասնակցության անհավանական ցուցանիշ էր գրանցվել մոտ 100 ընտրատեղամասերում:

Փետրվարի 21-ից պարոն Տեր-Պետրոսյանի աջակիցները խաղաղ բողոքի ցույց էին սկսել Երեւանի կենտրոնում: Մարտի 1-ին բռնության վերածված բախումներ են տեղի ունեցել ցուցարարների եւ ոստիկանության միջեւ: Տասը մարդ մահացել է եւ մոտ 200-ը վիրավորվել, այդ թվում նաև ոստիկաններ: Նախագահ Քոչարյանը հայտարարել էր արտակարգ իրավիճակ Երեւան քաղաքում, ինչը, ի թիվս այլոց, արգելք էր դրել հանրահավաքների եւ հավաքների վրա, եւ *de facto* գրաքննություն սահմանել: Արդյունքում ձերբակալվել էին մոտ 130 անձինք եւ հարուցվել էին մոտ 100 քրեական գործ:

Մարտի 4-7-ը Սահմանադրական դատարանը քննել էր ընտրությունների արդյունքների վերաբերյալ երկու բողոք՝ պարոն Տեր-Պետրոսյանի եւ պարոն Կարապետյանի կողմից: Մարտի 8-ին այն հաստատել էր ԿՀ որոշումն այն մասին, որ վարչապետ Սարգսյանը ընտրվել էր նախագահ: Հայտարարելով իր վճիռը՝ դատարանը առաջարկել էր վերանայել ընտրական բողոքների ընդունմանը վերաբերող իրավական դաշտը:

## II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ

2007 թվականի դեկտեմբերի 19-ին ստանալով Հայաստանի Հանրապետության Կառավարության հրավերքը՝ նախագահական ընտրություններին դիտորդություն իրականացնելու համար՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը 2008 թվականի հունվարի 10-ին հիմնեց Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸԴԱ): ԸԴԱ-ն ղեկավարել է դեսպան Գերտ-Հինրիխ Արենսը եւ կազմված է եղել Երեւանում տեղակայված 16 անդամ ունեցող

հիմնական թիմից եւ Հայաստանի տարածքում տեղաբաշխված 28 երկարաժամկետ դիտորդներից<sup>2</sup>:

Ընտրությունների օրը դիտորդություն իրականացնելու համար ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն ջանքերը միացրել է ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի (ԵԱՀԿ ԽՎ), Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՎ) եւ Եվրոպական խորհրդարանի (ԵԽ) հետ կազմելով Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն (ԸՄԴԱ): Տիկին Անն-Մարի Լիզանը, ԵԱՀԿ ԽՎ պատվիրակության ղեկավարը, ԵԱՀԿ նախագահի կողմից նշանակվել էր Հատուկ համակարգողի պաշտոնում՝ ԵԱՀԿ կարճաժամկետ դիտորդներին ղեկավարելու համար: Պարոն Ջոն Պրեսքոթը ղեկավարում էր ԵԽՎ պատվիրակությունը, եւ տիկին Մարի Անն Իզլեր Բեգանը ղեկավարում էր ԵԽ պատվիրակությունը:

Ընտրությունների օրը ԸՄԴԱ-ն ԵԱՀԿ 42 մասնակից պետություններից հավաքագրել է 333 կարճաժամկետ դիտորդ, այդ թվում՝ 250 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդ, 48 ԵԱՀԿ ԽՎ դիտորդ, 29 ԵԽՎ դիտորդ եւ 6 ԵԽ դիտորդ: ԸՄԴԱ-ն քվեարկությունը դիտարկել է 1,010 ընտրատեղամասերում, քվեների հաշվարկը՝ 111 ընտրատեղամասերում եւ արդյունքների ամփոփումը՝ բոլոր 41 ԸՀ-ներում:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը շնորհակալություն է հայտնում Հայաստանի պետական եւ տեղական իշխանություններին, մասնավորապես Արտաքին գործերի նախարարությանը եւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, ցուցաբերած աջակցության եւ համագործակցության համար: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նաեւ շնորհակալություն է հայտնում Երեւանում ԵԱՀԿ գրասենյակին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, ԵԱՀԿ մասնակից պետությունների Հայաստանում տեղակայված դեսպանություններին եւ միջազգային կազմակերպություններին առաքելության ողջ ընթացքում ունեցած համագործակցության համար:

### III. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2008 թվականի ընտրությունները ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից իր ստանդարտ մեթոդաբանությամբ դիտարկված յոթերորդ ընտրությունն էր Հայաստանի Հանրապետությունում<sup>3</sup>: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը եզրակացրել է, որ նախորդ՝ 2003 թվականի նախագահական ընտրությունները «չեն համապատասխանել ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին», մինչդեռ 2007 թվականի խորհրդարանական ընտրությունները գնատահվել են որպես ընտրություններ, որոնք «բարելավում ցուցաբերեցին եւ մեծամասամբ անցկացվեցին ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար ԵԱՀԿ եւ այլ միջազգային չափանիշների համաձայն: Այդուհանդերձ, հայկական իշխանությունների կողմից հայտարարված՝ ԵԱՀԿ պարտավորություններին եւ միջազգային չափանիշներին համապատասխան ընտրություններ անցկացնելու մտադրությունը լիարժեք չի իրականացվել»: Մինչ 2008

<sup>2</sup> ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն հրապարակել է երկու միջանկյալ զեկույց մինչ ընտրությունների օրը եւ մեկ հետընտրական միջանկյալ զեկույց, որոնք ամփոփում են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ի ընտրությունների օրվա եւ հետընտրական շրջանի հայտնաբերումները: Բոլոր զեկույցները տե՛ս՝ [www.osce.org/odihr-elections/28832.html](http://www.osce.org/odihr-elections/28832.html) հասցեում:

<sup>3</sup> Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ հաշվետվությունները 1996, 1998 եւ 2003 թ.թ. նախագահական եւ 1999, 2003 եւ 2007 թ.թ. խորհրդարանային ընտրությունների վերաբերյալ՝ [www.osce.org/odihr-elections/14350.html](http://www.osce.org/odihr-elections/14350.html)

թվականի նախագահական ընտրությունները բարձրաստիճան պետական պաշտոնյաները կրկին հայտնել են որպես ԵԱՀԿ մասնակից պետություն իրենց ստանձնած պարտավորություններին համապատասխանող ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու մտադրության մասին: Համաձայն իշխանությունների՝ այս մտադրությունը նաև փոխանցվել էր պետական կառավարման ստորին օղակներին:

Սահմանադրության համաձայն նախագահական ընտրություններն անց են կացվում հինգ տարին մեկ անգամ: Նախագահն ընտրվում է ձայների բացարձակ մեծամասնությամբ՝ երկրի ամբողջ տարածքից: Եթե թեկնածուներից որեւէ մեկը չի ստանում ձայների բացարձակ մեծամասնությունը, ապա առաջին փուլից 14 օր հետո ձայների առավել քանակ ստացած երկու թեկնածուների միջև անց է կացվում ընտրությունների երկրորդ փուլ: Երկրորդ փուլում ընտրված է համարվում ձայների մեծամասնություն ունեցող թեկնածուն: Գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը, պաշտոնավարել էր երկու հաջորդական ժամկետներում եւ, համաձայն Սահմանադրության, այլևս չէր կարող մասնակցել ընտրություններին որպես թեկնածու:

2008 թվականի փետրվարի նախագահական ընտրությունների շրջանում Ազգային ժողովում ներկայացված էին հինգ կուսակցություններ՝ իշխող Հանրապետական կուսակցությունը եւ նրա կոալիցիոն գործընկերներ Բարգավաճ Հայաստանը եւ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը (ՀԾԴ), ինչպես նաև երկու այլ կուսակցություններ՝ Օրինաց երկիր եւ Ժառանգություն: Բոլոր խոշոր քաղաքական կուսակցություններն առաջադրել էին նախագահի իրենց թեկնածուին կամ քաղաքական աջակցություն ցուցաբերել մեկ այլ թեկնածուի:

#### IV. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Սահմանադրությունը երաշխավորում է քաղաքացիական եւ քաղաքական իրավունքները, ինչպես նաև հիմնարար ազատությունները: Ընտրական օրենսգիրքը (այսուհետ՝ «օրենսգիրք»), որն ընդունվել է 1999 թվականին, ընտրությունները կանոնակարգող ամենակարեւոր առաջնային իրավական փաստաթուղթն է<sup>4</sup>: Այն հաճախակի փոփոխությունների ենթարկվել, վերջին անգամ՝ 2007 թվականի նոյեմբերի 16-ին եւ դեկտեմբերի 18-ին: Այս փոփոխությունները արտացոլում են 2007 թ-ի մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ վերջնական զեկույցում արված որոշ առաջարկություններ: Այդուհանդերձ, այս եւ մյուս զեկույցներում արված այլ առաջարկություններ, այդ թվում Ընտրական օրենսգրքի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի եւ Եվրախորհրդի Վենետիկյան հանձնաժողովի միացյալ կարծիքները, դեռ հասցեագրված չեն: Հեռուստատեսային եւ ռադիո հեռարձակման մասին օրենքը փոփոխվել է 2007-ին՝ հեռարձակվող լրատվամիջոցներով քարոզարշավի իրականացման հստակեցման նպատակով:

Օրենսգիրքը լավ հիմքեր է ապահովում ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար. 2008 թվականի ընտրական գործընթացի թերությունների պատճառը հիմնականում դրույթների արդյունավետ եւ անկողմնակալ իրականացման

<sup>4</sup> Ընտրությունների անցկացմանն առնչվող այլ իրավական ակտերի թվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Քրեական օրենսգիրքը, Վարչական դատավարության օրենսգիրքը, Ժողովներ, հանրահավաքներ, երթեր ու ցույցեր անցկացնելու մասին օրենքը, Քաղաքական կուսակցությունների մասին օրենքը եւ Հեռահաղորդակցության մասին օրենքը:



համար ոչ բավարար կամքի դրսևորումն էր: Այդուհանդերձ, իրավական դաշտում դեռ մնում են որոշ թերի կողմեր, որոնք, օրինակ, վերաբերում են ընտրական իրավունքին, քարոզարշավի դրույթներին եւ բողոքարկման ընթացակարգերին՝ այդ թվում նաեւ հետընտրական բողոքարկման ժամկետներին:

## V. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ընտրությունները կազմակերպվել են ԿԸՀ-ի, 41 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸՀ) ու 1,923 Տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏՀ) կողմից: Համաձայն Ընտրական օրենսգրքի<sup>5</sup> ընտրական հանձնաժողովները պետք է «ապահովեն քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումն եւ պաշտպանությունը [...], լինեն անկախ, [...] եւ գործեն իրավականության, կոլեգիալության եւ բաց սկզբունքների հիմունքներով»: Բոլոր ընտրական հանձնաժողովները պետք է անցած լինեին դասընթացներ եւ ստացած լինեին որակավորման վկայականներ<sup>6</sup>:

ԿԸՀ-ն ունի ութ անդամ, որից հինգը նշանակվում են Ազգային Ժողովում ներկայացված կուսակցությունների խմբակցությունների կողմից, մեկ անդամ նշանակվում է Նախագահի կողմից, իսկ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը նշանակում է երկու «դատական ծառայող»: ԿԸՀ յուրաքանչյուր անդամ առաջադրել էր մեկ ԸՀ անդամ, որն, իր հերթին, առաջադրել է մեկական անդամ յուրաքանչյուր ՏՀ-ում (այսուհետ՝ «առաջադրման շղթա»):

Յուրաքանչյուր հանձնաժողով ունի նախագահ, փոխնախագահ եւ քարտուղար («եռյակը»), ովքեր ընտրվել էին յուրաքանչյուր հանձնաժողովի առաջին նիստի ժամանակ: ԸՀ-ների *եռյակ* պաշտոններում ընտրված 123 անձանցից 93-ը (մոտ 75 տոկոս) առաջադրվել էին Հանրապետության Նախագահի, Հանրապետական կուսակցության կամ Բարգավաճ Հայաստանի կողմից, 23-ը (մոտ 19 տոկոս) առաջադրվել էին ՀՅԴ կողմից նշանակված ԿԸՀ անդամի կողմից եւ միայն յոթն (մոտ 6 տոկոս) էին առաջադրվել Օրինաց Երկիր եւ Ժառանգություն կուսակցությունների նշանակված ԿԸՀ անդամների կողմից (երկուսը միասին): ՏՀ *եռյակ* պաշտոններում նույնպես գերակշռում էին գործող կառավարության ներկայացուցիչները<sup>7</sup>: Մեկ քաղաքական շահի կողմից ընտրական գործընթացի վրա վերահսկողության այս նշանակալի մակարդակը լուրջ մտահոգություն էր առաջացնում ընտրական վարչարարության ներառականության, անկախության եւ անկողմնակալության վերաբերյալ:

<sup>5</sup> Ընտրական օրենսգրք, հոդված 32:

<sup>6</sup> Համաձայն ԿԸՀ նախագահի 2007 թվականին կազմակերպվել է դասընթացների 3 փուլ եւ որակավորման վկայականներ են ստացել 50,000 անձինք:

<sup>7</sup> ՏՀ նախագահի պաշտոնում ընտրված անձանց ավելի քան 77 տոկոսը նշանակված են իշխող Հանրապետական կուսակցության, Բարգավաճ Հայաստանի կամ Նախագահի առաջադրման շղթայի միջոցով: Նախագահի տեղակալի եւ քարտուղարի պաշտոններում ընտրված անձանց կեսից ավելին նշանակվել են նույն շղթայի կողմից: Դատարանների նախագահների խորհրդի առաջադրման շղթայի կողմից նշանակված երկու անդամները կազմում են ՏՀ նախագահների մոտ 20 տոկոսը: Դաշնակցություն, Ժառանգություն եւ Օրինաց երկիր կուսակցությունների «առաջադրման շղթաների» կողմից նշանակված երկու անդամները կազմում են ՏՀ նախագահների ավելի քիչ, քան 3 տոկոսը: Թիվ 7, 9 եւ 10 ընտրական տարածքներում երեք կուսակցություններից ոչ մեկի առաջադրված անդամ չի նշանակվել ՏՀ *եռյակի* պաշտոնում:

Ժառանգություն կուսակցությունը, որ 2007 թվականին առաջին անգամ ստացավ խորհրդարանական տեղեր, խնդիրներ է ունեցել ՏՀՀ անդամներ նշանակելու համար բավարար թվով մարդկանց գտնելու հարցում: Այն առաջարկել է «ընդդիմադիր» թեկնածուներին իրենց տրամադրել անձանց անուններ, որոնց կուսակցությունը կարող է առաջադրել որպես ՏՀՀ անդամ, ինչը ԿՀՀ նախագահը որակել է որպես միջամտություն ընտրական հանձնաժողովների աշխատանքին: Թեև Ժառանգություն կուսակցության գրեթե բոլոր առաջադրումները հաստատվել են, կուսակցությունը անդամներ չի առաջադրել բոլոր ՏՀՀ-ների համար:

Մինչ ընտրությունները ԿՀՀ-ն եւ ԸՀՀ-ները լավ էին կազմակերպված: ԿՀՀ-ն ընդունել է օրենսգիրքը լրացնող բազմաթիվ որոշումներ, ներառյալ քվեաթերթիկի անվտանգությունն ապահովող հավելյալ միջոցների ներմուծումը: Հանձնաժողովների նախապատրաստական աշխատանքներն իրականացվել են իրավական ժամկետների մեջ, թեև որոշ ԸՀՀ-ներ չեն պահպանել կանոնավոր աշխատանքային ժամեր: Համակողմանի ջանքեր են գործադրվել ՏՀՀ անդամներին վերապատրաստելու ուղղությամբ, ներառյալ քվեների հաշվարկի եւ արձանագրությունների լրացման գործընթացների վերաբերյալ: Լրատվամիջոցները հեռարձակել են ԿՀՀ կողմից պատրաստված սոցիալական գովազդներ՝ քվեարկության ընթացակարգերի մասին:

ԿՀՀ կողմից ընտրական գործընթացի տեխնիկական կազմակերպումն, ընդհանուր առմամբ, եղել է թափանցիկ: Օրինակ՝ այն հրապարակել է որոշումներ եւ տեղեկատվություն, կազմակերպել արդյունքների հրապարակումը ՏՀՀ մակարդակով: Թեև ԿՀՀ-ն միայն մի քանի պաշտոնական նիստ է ունեցել, բայց դրանց մասնակցել են դիտորդներ, թեկնածուների ներկայացուցիչներ եւ լրատվամիջոցներ: Այս դեպքերում ԿՀՀ անդամների մեջ շատ քիչ էական քննարկումներ են տարվել: Չնայած ԿՀՀ թափանցիկությանը ընտրությունների կազմակերպման գործում, ընտրական վեճերի քննության գործընթացը, լինելով օրենսգրքի դրույթներին համապատասխան, թափանցիկ չէր (տե՛ս ստորեւ Դիմումների եւ բողոքների վերաբերյալ XI եւ XV.Գ բաժինները):

## VI. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

2005 թվականից ի վեր զգալի ջանքեր են գործադրվել ընտրողների գրանցումը բարելավելու ուղղությամբ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին հայտնի չի եղել ընտրացուցակների լայնատարած անճշտությունների մասին, չնայած ընտրողների գրանցման որոշակի ասպեկտներ լիովին թափանցիկ չեն եղել:

Ըստ օրենքի Ընտրողների կենտրոնացված եւ թվայնացված ռեգիստրի վարման համար պատասխանատու է ոստիկանությունը՝ կառավարության հովանավորության ներքո<sup>8</sup>: Ընտրողների ռեգիստրը պետք է կազմվի ընտրողների գրանցման հասցեների հիման վրա<sup>9</sup> եւ շարունակաբար թարմացվում է: Առանձին ընտրացուցակներ են կազմվում կալանավայրերի եւ զինվորական զորամասերի ղեկավարությունների կողմից: Մինչ ընտրությունները ոստիկանությունը բազմաթիվ համայնքներում անց է կացրել ընտրողների ռեգիստրի տվյալների դոնեդոր ճշգրտում: Ընտրացուցակները մատչելի են ԿՀՀ կայքում, իսկ հունվարի 10-ից՝ ընտրատեղամասերում: Քաղաքացիներն իրենց

<sup>8</sup> Ընտրողների գրանցումը իրականացվում է Անձնագրերի եւ վիզաների վարչության կողմից (հայտնի ՕՎԻՌ հապավումով):

<sup>9</sup> ԿՀՀ-ն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին հայտնել է, որ ընտրողների ռեգիստրի տվյալները հիմնված են Բնակչության պետական ռեգիստրի վրա, որը նույնպես ՕՎԻՌ-ն է վարում:

գրանցումը կարող էին ստուգել հեռախոսային թեժ գծի միջոցով, իսկ լրատվամիջոցների հայտարարությունների միջոցով ընտրողներին տրամադրվել է տեղեկատվություն: Եթե ընտրատեղամաս գալով՝ քաղաքացիներն իրենց անունները չգտնեին՝ ընտրացուցակներում, նրանք կարող էին դիմել դատարան կամ ոստիկանություն՝ հայցելով իրենց գրանցումը հնարավոր դարձնող վկայական:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ գրուցակիցները հաճախ մտահոգություն են արտահայտել այն մասին, որ արտերկրում աշխատող Հայաստանի քաղաքացիների ներառումը ընտրողների ռեգիստրում բազմակի քվեարկության հնարավորություն կընձեռնի<sup>10</sup>: Արտերկրում աշխատող Հայաստանի քաղաքացիների թվի մասին հավաստի տեղեկատվություն մատչելի չի եղել<sup>11</sup>: Հայտարարություններ էին նաեւ արվում այն մասին, որ շատ անձինք գրանցված են սխալ վայրերում: Այդուհանդերձ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ին հայտնի չի լայնածավալ անճշտությունների մասին վկայող հավաստի տեղեկատվություն: Համաձայն ԿԸՀ-ի ընտրությունների օրը քվեարկության իրավունք ունեւ 2,370,781 ընտրող<sup>12</sup>:

Ընտրական օրենսգրքի 2007 թվականի նոյեմբերի փոփոխությունների համաձայն քաղաքացիները կարող էին քվեարկել ըստ փաստացի բնակության վայրի (իրենց հաշվառման վայրի փոխարեն): «Փաստացի բնակության վայրի» համաձայն վերագրանցման գործընթացը չի եղել բավարար չափով թափանցիկ: Այս տարբերակի վերաբերյալ սակավ տեղեկատվություն է տրամադրվել ընտրողներին, իսկ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ կողմից խնդրված տվյալները չեն տրվել ժամանակին<sup>13</sup>: Փետրվարի 18-ին ոստիկանությունը հայտնեց ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ին, որ 19,024 անձ էր գրանցվել փաստացի բնակության հասցեում քվեարկելու համար: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն հավաստիացել է, որ ռեգիստրի սկզբնական մուտքերը (համաձայն ԿԸՀ կայքում մատչելի տվյալների) ոչնչացվել են:

<sup>10</sup> Արտերկրում բնակվող Հայաստանի քաղաքացիները պահպանում են ընտրացուցակում մնալու իրավունքը, եթե Հայաստանում ունեն իրավական գրանցում: Սա համապատասխանում է միջազգային փորձին: Քանզի արտերկրում քվեարկություն տեղի չի ունենում, Հայաստանից դուրս *de facto* բնակվող բոլոր քաղաքացիները քվեարկելու համար պետք է վերադառնան Հայաստան:

<sup>11</sup> Փետրվարի 12-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն ՕՎԻՌ-ից խնդրել է տրամադրել տեղեկատվություն այն քաղաքացիների թվի մասին, ովքեր ժամանակավորապես բնակվում են արտերկրում: Փետրվարի 18-ին ՕՎԻՌ-ը պատասխանել է, որ չի պահում ճանապարհորդող կամ արտերկրում բնակվող քաղաքացիների մասին տվյալներ: Համաձայն 2001 թվականի մարդահամարի (<http://docs.armstat.am/census/pdfs/51.pdf>), Հայաստանի 18 տարին լրացած եւ ավելի բնակչության *de jure* թիվը 2,238,532 է, մինչդեռ 18 տարին լրացած եւ ավելի բնակչության *de facto* թիվը 2,072,206 է:

<sup>12</sup> Այս թիվը ԿԸՀ նախնական արդյունքների մեջ հրապարակված՝ ըստ ընտրատեղամասերի գրանցված ընտրողների թվի գումարն է: Վերջնական արդյունքների արձանագրությունը չի պարունակում գրացված ընտրողների թիվը: Փետրվարի 17-ին գրացված են եղել 2,328,320 անձինք, բացառությամբ զինվորական ընտրացուցակներում եւ կալանավայրերում եղած անձնաց թվի: 2008 թվականին ընտրություններում գրանցված անձանց թիվը մոտ 53,000-ով ավելի է եղել 2007 թվականի ընտրությունների համեմատությամբ (<http://www.elections.am/images/docs/masnakeng.pdf>):

<sup>13</sup> Փետրվարի 5-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն ՕՎԻՌ-ից գրավոր նամակով խնդրել է տրամադրել տեղեկատվություն ըստ ԸԸՀ-ների այն անձանց թվի մասին, ովքեր դիմել են իրենց փաստացի բնակության վայրում քվեարկելու համար: ՕՎԻՌ-ը բանավոր հայտնել է ԸՂԱ-ին, որ այս տեղեկատվությունը չի կարող տրամադրվել մինչեւ այս դրույթից քաղաքացիների օգտվելու համար սահմանված վերջնաժամկետը (փետրվարի 12): Փետրվարի 18-ին ՕՎԻՌ-ից ստացված պաշտոնական պատասխանը չի պարունակել տեղեկատվություն ըստ ԸԸՀ-ների դիմորդների մասին:

Ընտրությունների օրը ՏՀՀ-ներն ունեցել են մինչև վեց ընտրացուցակ<sup>14</sup>: ԸՄԴԱ դիտորդները զեկուցել են, որ այցելած ընտրատեղամասերի մոտ 19 տոկոսում ընտրողներին հետ են ուղարկել, քանի որ նրանց անունները չեն եղել ընտրացուցակներում, չնայած դեպքերի մեծամասնությամբ սա վերաբերել է միայն մի քանի քաղաքացու: Հնարավոր չէ իմանալ, թե քանի անձ է գրանցված եղել ընտրատեղամասում քվեարկության համար կամ գրանվել ընտրությունների օրը, քանզի այս տվյալները չեն գրանցվում ՏՀՀ արձանագրություններում: Հետեւապես, այս ընթացակարգը նվազեցրել է թափանցիկությունը<sup>15</sup>:

## VII. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Նախագահի թեկնածու կարող է ընտրվել 35 տարին լրացած, վերջին տասը տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող եւ Հանրապետությունում մշտապես բնակվող յուրաքանչյուր անձ: Երկքաղաքացիություն ունեցող անձինք կարող են քվեարկել, եթե Հայաստանում գրանցված են որպես բնակիչ: Այդուհանդերձ, նրանք չեն կարող առաջադրվել որպես ՀՀ Նախագահի ընտրությունների թեկնածու: Անհավասար ընտրական իրավունքի ստեղծումը հակասում է 1990 թվականի ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթղթի<sup>16</sup> 7.3 կետում պարունակվող՝ քաղաքացիներին հավասար ընտրական իրավունքի ապահովման պարտավորությանը:

Ընտրական օրենսգրքի 2007 թվականի նոյեմբերյան փոփոխությունները հնարավորություն են տալիս թեկնածուներին ինքնաառաջադրվել (այսինքն, առաջադրվել որպես անհատ, անկուսակցական թեկնածու), ինչով օրենսգիրքը համապատասխանում է 1990 թվականի ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթղթի 7.5 կետին: Թեկնածուների գրանցման գործընթացը հեշտացվել էր, քանզի վերացվել էր թեկնածուների կողմից ստորագրությունների հավաքման անհրաժեշտությունը: Թեկնածուների կողմից վճարվող ընտրական գրավի չափն ավելացել էր՝ 5 միլիոն դրամից դառնալով 8 միլիոն դրամ (մոտ 17,000 եվրո):

2007 թվականի դեկտեմբերի 6-ի վերջնաժամկետին ինը առաջադրված թեկնածուներ դիմել էին ԿՀՀ որպես թեկնածու գրանցվելու համար՝ Արթուր Բաղդասարյան (Ազգային ժողովի նախկին խոսնակ եւ Օրինաց երկիր կուսակցության առաջնորդ) Արտաշես Գեղամյան (Ազգային Միաբանություն կուսակցության առաջնորդ), Տիգրան Կարապետյան (Ժողովրդական կուսակցության առաջնորդ), Արամ Հարությունյան (Ազգային համաձայնություն կուսակցության առաջնորդ), Վահան Հովհաննիսյան (Ազգային ժողովի փոխխոսնակ, ՀՅԴ Դաշնակցություն կուսակցության առաջնորդ), Վազգեն Մանուկյան (Ազգային ժողովրդավարական միության առաջնորդ), Արման

<sup>14</sup> Յուրաքանչյուր ընտրատեղամասի հիմնական ընտրացուցակը եւ լրացուցիչ ընտրացուցակներ՝ անհրաժեշտության դեպքում զինվորական ընտրողների համար, ընտրատեղամասերում հերթապահող ոստիկանների համար, անհրաժեշտության դեպքում հիվանդանոցներում գտնվող անձանց համար, իրենց «փաստացի» բնակության հասցեում քվեարկելու համար գրանցված անձանց համար, եւ ընտրությունների օրը գրացվող անձանց «հավելյալ» ընտրացուցակ:

<sup>15</sup> Ընտրությունների օրը գրանցված անձանց թիվը հայտնի էր միայն ՏՀՀ-ներին, եւ հատուկ գրանցում այդ թվի վերաբերյալ չի արվել:

<sup>16</sup> Հայաստանի Ընտրական օրենսգրքի 2007 թվականի փետրվարի 26-ի փոփոխությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի եւ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի Միացյալ կարծիքի համաձայն «երկքաղաքացիության ընդունման դեպքում երկքաղաքացիների իրավունքները չպետք է ավելի պակաս լինեն այլ քաղաքացիների իրավունքներից»: 2007 թվականի հունիս, (CDL-AD2007)023՝ տե՛ս [www.osce.org/documents/odhr/2007/06/25345\\_en.pdf](http://www.osce.org/documents/odhr/2007/06/25345_en.pdf):

Մեյիքյան (ինքնաառաջադրված թեկնածու), Մերժ Սարգսյան (գործող վարչապետ, Հանրապետական կուսակցության կողմից առաջադրված) եւ Լեւոն Տեր-Պետրոսյան (Հայաստանի առաջին նախագահ եւ ինքնաառաջադրված թեկնածու):

Բոլոր առաջադրված թեկնածուները ԿԸՀ կողմից գրանցվել են ներառական կերպով եւ առանց խտրականության: Թեկնածուական դաշտը ընձեռում էր քաղաքական մրցության բարձր աստիճան եւ ընտրողներին առաջարկում էր իրական ընտրության հնարավորություն:

Օրենսգիրքը թույլ է տալիս քաղաքացիական ծառայողների, բարձրաստիճան պետական պաշտոնյաների եւ «քաղաքական եւ հայեցողական» պաշտոններ զբաղեցնող անձինք կարող են գրանցվել որպես թեկնածու: Օրենքի որոշակի հոդվածների եւ տերմինների շփոթությունը հակասություն առաջացրեց վարչապետ Սարգսյանի կողմից՝ նախագահի թեկնածու հանդիսանալով որպես վարչապետ պաշտոնավարումը շարունակելու վերաբերյալ: ԿԸՀ-ն պաշտոնական պարզաբանում տվեց այն դասերի անձանց վերաբերյալ, ովքեր պարտավոր են արձակուրդ գնալ նախագահի թեկնածու գրանցվելուց հետո, համաձայն որի անձինք, ովքեր օրենքով դասվում են «քաղաքացիական ծառայողների» շարքում, պարտավոր են դադարեցնել իրենց պաշտոնական լիազորությունները, մինչդեռ «քաղաքական եւ հայեցողական» պաշտոններ զբաղացող անձինք նման պարտավորություն չունեն<sup>17</sup>: Այս խնդրի վերաբերյալ որոշում կայացնելիս ԿԸՀ-ն թերեւս գերազանցել է իր իրավասությունների շրջանակները<sup>18</sup>:

Թեկնածուները կարող են նշանակել վստահված անձանց, ովքեր իրավունք ունեն մասնակցել ընտրական հանձնաժողովի նիստերին, ստանալ ընտրական փաստաթղթերի պատճեններ, բողոքարկել հանձնաժողովների որոշումները, հետեւել քվեաթերթիկների տպագրման, տեսափոխման, պահեստավորման եւ հաշվարկի գործընթացին, ինչպես նաեւ դիտարկել ընտրությունների օրվա ընթացքը: Թեկնածուներն օգտագործել են այս դրույքը եւ ումանք գրանցել են բազմաթիվ վստահված անձանց:

## VIII. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Նախընտրական շրջանում հանրության մեջ կար ընտրական գործընթացների հանդեպ վստահության տեսական պակաս<sup>19</sup>: Բարձրաստիճան պետական պաշտոնյաները հայտարարություններ են արել ընտրողներին վստահեցնելու նպատակով. նախագահ Քոչարյանը բազմիցս կրկնել է միջազգային չափանիշներին լիովին համապատասխանող ընտրությունների անցկացման մտադրության մասին, գլխավոր դատախազը զգուշացրել է ընտրական իրավախախտումների համար սահմանված իրավական պատիժների մասին, ԿԸՀ նախագահը քաղաքացիներին վստահեցրել է իրենց քվեի գաղտնիության եւ

<sup>17</sup> 7 հունվարի 2008 թվական, ԿԸՀ որոշում #N1:

<sup>18</sup> Ընտրական օրենսգրքի հոդված 41-ի համաձայն ԿԸՀ-ն իրավասու է օրենսգրքի կիրառման վերաբերյալ աշխատանքային ընթացակարգերի մասին որոշումներ կայացնել եւ ցուցումներ հրապարակել:

<sup>19</sup> Սոցիոլոգիայի հայկական ասոցիացիայի կողմից Միջազգային Հանրապետական ինստիտուտի անունից Բալթյան հարցումներ/Գեյլափի համար կատարված՝ 2008 թվականի փետրվարի 15-ին հրապարակված հարցման (ընգրկում է հունվարի 13-20-ը) արդյունքներում հարցվողների 46 տոկոսը չէր կարծում, որ ընտրությունները կլինեն «ազատ եւ արդար»: «Արդյո՞ք Հայաստանում մարդիկ վախենում են իրենց տեսակետները բացահայտ արտահայտել» հարցին 23 տոկոսը պատասխանել է, որ վախենում են «մեծամասնությունը», 37 տոկոսը՝ «շատերը» եւ 27 տոկոսը՝ «ոմանք»: Տե՛ս [www.iri.org/eurasia/armenia/pdfs/2008%20February%2015%20Survey%20of%20Armenian%20Public%20Opinion,%20January%2013-20,%202008.pdf](http://www.iri.org/eurasia/armenia/pdfs/2008%20February%2015%20Survey%20of%20Armenian%20Public%20Opinion,%20January%2013-20,%202008.pdf):

ընտրության ազատության մեջ, եւ մարդու իրավունքների պաշտպանը քննադատել է քվեների առք ու վաճառքը:

Ընտրական օրենսգիրքը (հոդված 18(7)) արգելում է թեկնածուներին (կամ նրանց անունից հանդես եկող անձանց) նախընտրական քարոզարշավի շրջանում քաղաքացիներին տալ կամ խոստանալ փող, ապրանքներ կամ ծառայություններ: Օրենսգրքի 31-րդ գլուխը սահմանում է պատիժ նախատեսող իրավախախտումների ցանկը, այդ թվում նաեւ «քարոզարշավի բնականոն ընթացքին խոչընդոտելը» եւ «ընտրողների կամքի ազատ արտահայտմանը խոչընդոտելը կամ հարկադրելը»<sup>20</sup>: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ գրուցակիցները հաճախ մտահոգություն են արտահայտել քվեի գաղտնիության մասին եւ խոսել լայնամասշտաբ քվեների գնման, ընտրողների փոխարեն քվեարկության եւ բազմակի քվեարկության մասին: Մինչ հայտարարությունների մեծ մասը հնարավոր չեղավ ապացուցել կշիռ ունեցող ապացույցներով, ընտրություններին մոտ շրջանի եւ ընտրությունների օրվա բացահայտումները վստահություն ավելացրեցին նման հայտարարություններին: Օրինակ, փետրվարի 18-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ դիտորդները հաստատեցին Վարդաբլուր եւ Բագում գյուղերում (թիվ 31 ԸԸՀ, Լոռու մարզ) քվեների գնման սխեմայի գոյությունը: Այնուամենայնիվ, այլ հայտարարություններ, ինչպես օրինակ մեկ թեկնածուի կողմից կրկնվող պնդումը, որ տպագրվել էին 500,000 հավելյալ քվեաթերթիկներ, չհիմնավորվեցին:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ դիտորդները բազմաթիվ բողոքներ են ստացել քաղաքացիների անձնագրային տվյալների (ոչ պաշտոնական) հավաքման մասին, այդ թվում նաեւ որոշ անմիջական աղբյուրներից: Մեկ դեպքում, օրինակ, ուսուցիչները խնդրել էին աշակերտներին դպրոց բերել իրենց ծնողների անձնագրային տվյալները: Մեկ այլ դեպքում, նման տվյալների հավաքագրման թերթիկը պարունակում էր «Հանրապետական կուսակցություն» վերնագրով աղյուսակ, նախանշելով, որ հավաքագրվող տեղեկատվությունն օգտագործվում էր կուսակցության նպատակներով: Սա հասարակության մեջ անհանգստություն էր առաջացնում հնարավոր ընտրակեղծիքների վերաբերյալ եւ ազդում հանրության վստահության վրա: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ գրուցակիցները բազմազան անգամներ պնդել են, որ այս գործողություններն օգտագործվում էին քաղաքացիների ընտրության վրա «հոգեբանական ճնշում» գործադրելու համար կամ որ այդ տեղեկատվությունը կօգտագործվի «ընտրողների փոխարեն քվեարկություն» իրականացնելու կամ քվեների գնման համար:

Օրենքով բոլոր քաղաքացիներն իրավունք ունեն քարոզարշավ ծավալելու որեւէ թեկնածուի օգտին կամ նրա դեմ: Այնուամենայնիվ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ մտահոգված էր քաղաքական արտահայտման եւ որոշ քաղաքացիների, հատկապես հանրային սեկտորի աշխատակիցների, ընտրության ազատությամբ: Կար ուժեղ ընկալում, որ աշխատակիցների այս խումբը ստիպված էր աջակցել իշխող կուսակցության թեկնածուին եւ աջակցություն ցույց չտալը կարող էր հետեւանքներ ունենալ նրանց անհատական բարեկեցության վրա: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ դիտորդները ութ անմիջական աղբյուրից ստացել են տեղեկատվություն, այն մասին, որ հանրային սեկտորի աշխատակիցները իրենց աշխատանքային վերադասերի կողմից հրահանգ են ստացել մասնակցել վարչապետ Սարգսյանի նախընտրական քարոզարշավի միջոցառումներին (եւ հետընտրական հանրահավաքներին) կամ նրանց ասվել է, որ կարող են նրա հանրահավաքներին մասնակցելու նպատակով ազատ դուրս գալ աշխատավայրից:

<sup>20</sup> Ընտրություններին առնչվող այլ իրավախախտումները սահմանված են Վարչական դատավարության օրենսգրքում եւ Քրեական օրենսգրքում:

Ժառանգության կողմից առաջադրված մի քանի ընտրական հանձնաժողովների անդամներ բողոքել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ դիտորդներին ահաբեկված լինելու մասին, ինչը նրանք վերագրել են իրենց նշանակմանը<sup>21</sup>:

## IX. ԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՋԱՐՇԱՎԸ

### Ա. ՔԱՐՈՋՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Ընտրական օրենսգիրքը պահանջում է, որպեսզի ապահովվի քաղաքացիների քարոզարշավ վարելու իրավունքի ազատ իրականացումը եւ որպեսզի նախընտրական քարոզարշավն անցկացվի հավասարության հիմքերով<sup>22</sup>: Պաշտոնական քարոզարշավը մեկնարկում է թեկնածուների գրանցումից մեկ օր անց եւ ավարտվում ընտրությունների օրվանից մեկ օր առաջ: Քարոզարշավի պաշտոնական մեկնարկից առաջ նախընտրական քարոզարշավ իրականացնելն արգելող հստակ իրավական դրույթներ չկան:

Պետական մարմինները թեկնածուներին պետք է անվճար հիմունքներով տարածքներ տրամադրեն քարոզարշավի համար: ԿԸՀ համարում էր, որ այս դրույթը վերաբերում է միայն պետական սեփականությանը, այլ ոչ տեղական ինքնակառավարման մարմինների սեփականությանը: Այդուհանդերձ, միայն որոշ բացառություններով, թեկնածուներին առանց խոչընդոտների հաջողվել է ստանալ քարոզարշավ իրականացնելու համար տարածքներ:

«Համայնքային առաջնորդները» (տեղական ինքնակառավարման պաշտոնյաները) պետք է անվճար եւ հավասարության հիմունքներով մատչելիության տեսանկյունից հարմարավետ տեղեր տրամադրեն յուրաքանչյուր ընտրատեղամասում թեկնածուների քարոզարշավի նյութերի համար: Օրենսգիրքը չի հստակեցնում, թե արդյոք այդ տեղերը պետք է լինեն անվճար: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ դիտորդները զեկույցել են սույն դրույթի ոչ հետեւողական իրականացման մասին. որոշ քաղաքապետեր այս տեղերը չեն հատկացրել, մյուսները վճար են գանձել դրանց դիմաց, իսկ երբեմն էլ հատկացված տեղերը մատչելիության տեսանկյունից հարմարավետ չեն եղել<sup>23</sup>:

Քաղաքական կուսակցությունների մասին օրենքը պահանջում է, որ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքական կուսակցություններին հավասարության հիմունքներով գրասենյակային տարածք եւ հաղորդակցման միջոցներ տրամադրեն<sup>24</sup>: Հանրապետական կուսակցությունն ունի բազմաթիվ գրասենյակներ, որ տեղակայված են համայնքային շինություններում: Քարոզարշավի ընթացքում այս գրասենյակները վերափոխվել էին նախընտրական շտաբերի<sup>25</sup>: Սա Հանրապետական

<sup>21</sup> Օրինակ՝ թիվ 28 ԸԸՀ-ում (Աբովյան) ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ դիտորդները վստահելի տեղեկատվություն են ստացել, որ Ժառանգության կուսակցության կողմից առաջադրված ՏԸՀ անդամներին ասվել է, որ ընտրությունների օրը չգնան ընտրատեղամասեր, այլպես կկրեն բացասական հետեւանքներ, ինչպես մշտական աշխատանքի կորուստը կամ ընտանիքի անդամների հասցված ֆիզիկական վնասը:

<sup>22</sup> Ընտրական օրենսգիրք, հոդված 18:

<sup>23</sup> Օրինակ՝ Իջևանի քաղաքապետը տարածք հատկացրել է, մինչդեռ Գյումրիի նախնապես ոչ: Ախուրյանում (Գյումրու մարզ) քաղաքապետը կուսակցություններին տեղեկացրել է, որ անհրաժեշտ է վճարել:

<sup>24</sup> Ընտրական օրենսգիրք, հոդված 18:

<sup>25</sup> Օրենքում տեղական ինքնակառավարման շինություններում նախընտրական շտաբերի բացումն արգելող հստակ սահմանափակում չկա:

կուսակցությանը (ինչպես նաև այլ կուսակցությունների, որոնք նման գրասենյակներ ունեին, թեև ավելի պակաս չափով) տվեց *de facto* քարոզարշավային առավելություն այլ թեկնածուների հանդեպ, որոնցից ոմանք պետք է գտնեին եւ վճարեին նախընտրական շտաբերի գրասենյակների համար: Պարոն Տեր-Պետրոսյանն, օրինակ, հայտնել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդներին, որ դժվարացել է որոշ փոքր եւ մեծ քաղաքներում<sup>26</sup> գրասենյակային տարածք ձեռք բերելու հարցում:

Օրենսգրքի հոդված 18(8)-ի համաձայն ԿԸՀ-ն եւ ԸԸՀ-ները պետք է վերահսկեն թեկնածուների կողմից քարոզարշավին վերաբերող դրույթների պահպանումը: Օրենսգրքի 2007 թվականի նոյեմբերի փոփոխության համաձայն իրավական դրույթների խախտման դեպքում ընտրական հանձնաժողովը պետք է պաշտոնապես զգուշացնի թեկնածուին: Եթե խախտումը չի ուղղվում եռօրյա ժամկետում, ընտրական հանձնաժողովը պետք է դիմի դատարան՝ թեկնածուի գրանցումը չեղյալ համարելու համար: Այնուամենայնիվ, ԿԸՀ-ն եւ ԸԸՀ-ները դրսևորեցին այս պարտականության պրակտիկ իրականացման ոչ բավարար կարողություն կամ պատրաստականություն: Չնայած բազմազան փաստացի եւ ենթադրյալ քարոզարշավային իրավախախտումների եւ մի քանի պաշտոնական բողոքների, ոչ մի թեկնածու չի ստանցել որեւէ պաշտոնական զգուշացում:

#### Բ. ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Վարչապետ Սարգսյանի քարոզարշավին ակտիվորեն սատարում էր իշխող Հանրապետական կուսակցությունը: Ի հավելումն, նա ստացել էր Բարգավաճ Հայաստան եւ այլ մոտ 15 արտախորհրդարանական կուսակցությունների աջակցությունը: Ընտրություններից քիչ առաջ վարչապետ Սարգսյանի թեկնածությունն արժանացել է նախագահ Քոչարյանի հավաստմանը: Պարոն Տեր-Պետրոսյանին սատարում էին 15 արտախորհրդարանական կուսակցություններ, իսկ փետրվարի 11-ին նրան սատարեց Ժառանգություն կուսակցությունը: Մյուս թեկնածուներին սատարում էին նրանց առաջադրած կուսակցությունները:

Քարոզարշավի 28-օրյա պաշտոնական ժամկետը սկսել էր հունվարի 21-ին: Քարոզարշավի զարգացման հետ քարոզարշավի լեզուն որոշ թեկնածուների միջև դառնում էր ավելի եւ ավելի բարկ: Պարոն Տեր-Պետրոսյանը հաճախ էր նսեմացնող արտահայտություններ անում վարչապետ Սարգսյանի եւ նախագահ Քոչարյանի հասցեին, մինչդեռ վերջինս եւ պարոն Գեղամյանը սուր քննադատում էին պարոն Տեր-Պետրոսյանին:

Վարչապետ Սարգսյանը քարոզարշավ էր ծավալում երկրի ողջ տարածքում, իսկ պարոն Տեր-Պետրոսյանը, պարոն Հովհաննիսյանը եւ պարոն Բաղդասարյանը ակտիվ քարոզարշավ էին անցկացնում մարզերի մեծ մասում: Մյուս թեկնածուների քարոզարշավներն, ընդհանուր առմամբ, ավելի պասսիվ են եղել: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ներկա է եղել 71 քարոզարշավային հանրահավաքների: Դրանց մեծ մասն անցել են

<sup>26</sup> Պարոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբը պնդում էր, օրինակ, որ իրենց մերժել են գրասենյակի տարածք տրամադրել վարձով Մասիսում (Արարատի մարզ), այն բանից հետո, որ սեփականատիրոջ վրա ճնշումներ են գործադրվել քաղաքապետի եւ ոստիկանության կողմից: Օրինաց երկիրը հայտնել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդներին, որ ստիպված է եղել փակել Վանաձորի նախընտրական շտաբը, սեփականատիրոջ հասցեին արված սպառնալիքների պատճառով:



խաղաղ պայմաններում: Թեկնածուներն, ընդհանուր առմամբ, կարողացել էին իրենց ուղերձները փոխանցել առանց միջամտության: Այդուհանդերձ, հասարակական կարգի խախտման միջադեպեր են ծագել պարոն Տեր-Պետրոսյանի քարոզարշավային հանդիպումներից երկուսի ժամանակ<sup>27</sup>: Մինչ քաղաքացիների ազատ տեղաշարժման եւ հավաքների իրավունքը հիմնականում հարգված են եղել, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ դիտորդները նկատել են որոշ բացառություններ, երբ քաղաքացիներին անտեղի պարտադրել են մասնակցել քարոզարշավային միջոցառումների<sup>28</sup>: Սա նաեւ հարցերի տեղիք տվեց թեկնածուների հավասար վերաբերմունքի առնչությամբ: Քարոզարշավի ակտիվիստների դեմ բռնության<sup>29</sup> եւ նախընտրական շտաբերի գրասենյակներին հասցված վնասի<sup>30</sup> մի քանի դեպքեր են գրանցվել: Այս միջադեպերը ավելացրեցին նախընտրական մթնոլորտի աճող լարվածությունը:

Վարչապետ Սարգսյանի քարոզչական նյութերը մեծապես տեսանելի են եղել մեծ գովազդային վահանակների վրա եւ խանութների ցուցափեղկերում: Պարոն Բաղդասարյանի, պարոն Հովհաննիսյանի եւ պարոն Տեր-Պետրոսյանի քարոզչական նյութերը տեսանելի էին Երեւանում եւ որոշ մարզկենտրոններում՝ առավել նվազ չափով: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ դիտորդները երբեմն տեսել են մյուս վեց թեկնածուների քարոզչական նյութերը: Պարոն Բաղդասարյանի, պարոն Հովհաննիսյանի եւ պարոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբերից ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ին հայտնել են, որ դժվարություններ են ունեցել մասնավոր սեփականություն հանդիսացող գովազդային վահանակների վրա տարածք գնելու հարցում Երեւանում. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն չի կարողացել հաստատել սույն հայտարարությունը:

**Գ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՔԱՐՈՋԱՐՇԱՎՈՒՄ**

Պետական եւ տեղական ինքնակառավարման պաշտոնյաների մասնակցությունը վարչապետ Սարգսյանի քարոզարշավում հակասական էր: Ըստ օրենսգրքի՝ «քաղաքական եւ հայեցողական» պաշտոններ զբաղեցնող թեկնածուները իրավունք չունեն պաշտոնը զբաղեցնելու ընթացքում մասնակցել քարոզարշավին, չարաշահել իրենց

<sup>27</sup> Հունվարի 27-ին Թալինում (Արագածոտն) ծեծկոտուկ է առաջացել, իսկ փետրվարի 6-ին Արտաշատում պատահած ուղղությամբ քարեր են նետվել մասնակիցների վրա:

<sup>28</sup> Օրինակ՝ Ալավերդիում (Լոռի) փետրվարի 2-ին պարոն Տեր-Պետրոսյանի հանրահավաքի ժամանակ քաղաքի երկու մասերը բաժանվել են՝ տրանսպորտային միջոցները կանգնեցնելու պատճառով: Փետրվարի 3-ին Երեւանում պարոն Բաղդասարյանի աջակիցներին տեղափոխող ավտոբուսները կանգնեցվել են ոստիկանության կողմից, ըստ երեւոյթին համարանիշերի հետ կապված խնդիրների պատճառով: Ավտոբուսներից մեկին թույլատրվել է շարունակել, երկրորդին հետ են ուղարկել, ոստիկանները տեղեկացրել են ուղեւորներին, որ չեն ցանկացել հանրահավաքին շատ մարդ տեսնել: Հակառակ դրան, փետրվարի 6-ին Վանաձորում վարչապետ Սարգսյանի հանրահավաքի ժամանակ անվճար տրանսպորտ է տրամադրվել՝ օգտագործելով սովորաբար հասարակական ծառայություն իրականացնող ավտոբուսներ:

<sup>29</sup> Փետրվարի 7-ին Նոր Նորքի (Երեւան) համայնքում պարոն Տեր-Պետրոսյանի քարոզարշավի երեք ակտիվիստներ հարձակման են ենթարկվել քարոզչական նյութերի բաժանման ժամանակ: Մեկ այլ միջոցառման ժամանակ քարոզարշավի ակտիվիստի վրա հարձակվել են Քանաքեռ Ջեյթունի (Երեւան) նախընտրական շտաբում:

<sup>30</sup> Օրինակ՝ հունվարի 25-ին վանդալիզմի են ենթարկվել Օրինաց երկիր կուսակցության գրասենյակները Վանաձոր քաղաքում, հունվարի 30-ին Սիլիկյան թաղամասում եւ փետրվարի 1-ին Վանաձորում հավանական հրկիզման պատշառով վնաս է հասցվել պարոն Տեր-Պետրոսյանի երկու նախընտրական շտաբերի գրասենյակների, Փետրվարի 1-ին Երեւանի Նոր Նորք եւ Ավան համայնքների Հանրապետական կուսակցության գրասենյակներում տեղի են ունեցել կրակոցներ:

պաշտոնական դիրքը ընտրական առավելություններ ստանալու նպատակով, եւ «կողմնապահություն ցուցաբերելով ազդել քաղաքացիների կամքի ազատ արտահայտման վրա»<sup>31</sup>: Այն նաեւ արգելում է լրատվամիջոցներին լուսաբանել նման թեկնածուների գործունեությունը (որոշակի բացառություններով): Հայեցողական պաշտոններ զբաղեցնող թեկնածուները պետք է իրենց քարոզարշավը ծավալեն ընդհանուր հիմունքներով, առանց հատուկ առավելությունների, բացառությամբ պահպանելով պաշտպանության եւ անվտանգության ստացումը: Այդուհանդերձ, օրենսգիրքը լիովին չի հստակեցնում, թե ինչ պայմաններում այս անձինք կարող են լեգիտիմորեն քարոզել հոգուտ որեւէ թեկնածուի, օրինակ՝ պաշտոնապես արձակուրդ գնալով եւ իրենց պաշտոնական տնօրինման տակ գտնվող ամբողջ պետական սեփականություն հանդիսացող ռեսուրսների օգտագործումը դադարեցնելով: Պարոն Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբը շարունակաբար պնդում էր, որ վարչապետ Սարգսյանը քարոզարշավ էր ծավալում միաժամանակ իրականացնելով իր պաշտոնական լիազորությունները, եւ, հետեւապես, ստանում էր ոչ տեղին քարոզչական առավելություն:

Տարածքային կառավարման նախարար (եւ փոխվարչապետ) Հովիկ Աբրահամյանը, որը նաեւ վարչապետ Սարգսյանի նախընտրական շտաբի պետն էր, տեղեկացրել էր ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ քարոզարշավի ընթացքում արձակուրդ էր գնում իր զբաղեցրած պաշտոնում: Նա նաեւ հայտնել էր, որ մարզպետներին (Հանրապետական կուսակցության անդամ) խնդրել են չմասնակցել վարչապետ Սարգսյանի օգտին քարոզչությանը, կամ դա անել աշխատանքային ժամերից դուրս: Այդուհանդերձ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները հայտնաբերել են, որ շատ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաներ ակտիվ քարոզարշավ են ծավալել վարչապետ Սարգսյանի օգտին՝ նրանց միայն մի մասն է արձակուրդ գնացել<sup>32</sup>, եւ նկատել են դեպքեր, երբ քաղաքապետերն ու մարզպետերը ուղեկցել են վարչապետ Սարգսյանին քարոզարշավային միջոցառումների ժամանակ<sup>33</sup>:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդները զեկույցել են պետական աշխատակիցների եւ տեսական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաների կողմից վարչապետ Սարգսյանի հանդեպ ցուցաբերած «կողմնակալության» բազմաթիվ օրինակների մասին: Քարոզարշավի միջոցառումներից մեկի ժամանակ<sup>34</sup> նրանք տեսել են, թե ինչպես է համազգեստ կրող ոստիկանը Հանրապետական կուսակցության դրոշներ բաժանում, իսկ այլ դեպքերում, թե ինչպես է նրա ոստիկանական էսկորտը նման դրոշներ կրում: Բազմաթիվ հանրային սեկտորի եւ տեղական ինքնակառավարման մարմինների

<sup>31</sup> Ընտրական օրենսգիրք, հոդված 22.1: Ի հավելումն, հոդված 18(4)-ն արգելում է «քարոզչություն իրականացնել եւ որեւէ քարոզչական նյութերի բաժանում... պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կամ նրանց աշխատակիցների՝ իրենց պաշտոնական պարտականությունների կատարման ժամանակ...»:

<sup>32</sup> Օրինակ Գյումրիի (Շիրակի մարզ) քաղաքապետը շարունակել է իրականացնել իրենց պաշտոնական պարտականությունները՝ ակտիվորեն մասնակցություն ցուցաբերելով Մերժ Սարգսյանի ընտրական քարոզարշավին, Գորիսի (Սյունիք) քաղաքապետը տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդներին, որ ժամանակավոր արձակուրդ է վերցրել, Արմավիրի (Արմավիր) քաղաքապետը հայտնել է, որ նա մասնակցել է քարոզարշավին միայն աշխատանքային ժամերից դուրս, մինչդեռ Օձունի (Լոռու մարզ) գյուղապետը պնդել է, որ աշխատանքային օրը կիսել է երկու գործառույթների միջև:

<sup>33</sup> Օրինակ՝ Սյունիքի մարզպետը հունվարի 24-ին ուղեկցել է վարչապետ Սարգսյանին Ղափանում կայացող քարոզարշավային միջոցառման ժամանակ: Երեւանի քաղաքապետը մասնակցել է վարչապետ Սարգսյանի քարոզարշավի մի քանի միջոցառումների: Փետրվարի 6-ին Լոռիի մարզպետը եւ Վանաձորի քաղաքապետը քարոզարշավի միջոցառման ժամանակ վարչապետ Սարգսյանի հետ եղել են բեմահարթակի վրա:

<sup>34</sup> Փետրվարի 14-ին Արտաշատում:

աշխատակիցներ, հատկապես դպրոցական ուսուցիչներ, մասնակցել են վարչապետ Սարգսյանի հանրահավաքներին, հաճախ աշխատանքային ժամերի ընթացքում: Նրա քարոզչական նյութերը փակցված են եղել հանրային սեփականություն հանդիսացող շինությունների մեջ եւ վրա, այդ թվում նաեւ Երեւանի եւ ութ մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների շինությունները<sup>35</sup>:

Վարչապետ Սարգսյանը քարոզչական դե ֆակտո առավելություն է վայելել իր մրցակիցների նկատմամբ շնորհիվ լրատվամիջոցների կողմից բարենպաստ լուսաբանման, որ ստացել է իր պաշտոնական պարտականությունները կատարելիս. օրինակ՝ երբ այցելել է որպես վարչապետ դեկտեմբերի 4-ին<sup>36</sup>, որպես թեկնածու առաջադրվելու վերջնաժամկետից երկու օր առաջ, ստեղծած քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրները եւ բողոքները վերանայող աշխատանքային խմբին<sup>37</sup>: Վարչապետ Սարգսյանի կողմից իր պաշտոնի պահպանումը շփոթություն էր առաջացնում նրա երկու դերերի միջև: Օրինակ, Միացյալ ազատական ազգային կուսակցությունը, որը քարոզում էր վարչապետ Սարգսյանի օգտին, իրականացրել է դրնից դուրս քարոզարշավ՝ առաջարկելով քաղաքացիներին լրացնել «դիմումներ», որոնք հասցեագրված են եղել «ՀՀ Նախագահի թեկնածու, ՀՀ վարչապետին» եւ հանձնվել են դրանք այն բաժնին, որտեղ տեղակայված է այդ կառավարական աշխատանքային խումբը:

Վարչապետ Սարգսյանին շնորհված նպաստավոր վերաբերմունքը անհամատեղելի է պետության իրավական պահանջների հետ, համաձայն որոնց պետք է ստեղծվեն քարոզչության հավասար պայմաններ եւ պաշտոնյաները պետք է զերծ մնան քաղաքացիների ազատ կամքի վրա ազդելու համար իրենց իշխանության օգտագործումից: Դրա հետեւանքով նաեւ աղավաղվեց պետության եւ քաղաքական կուսակցության շահերի միջև տարանջատումը: Սույն գործոնները հակասում են 1990 թվականի ԵԱՀԿ Կոպենհագենի փաստաթղթի 5.4, 7.6 եւ 7.7 կետերով Հայաստանի ստանձնած պարտավորություններին:

## Դ. ՔԱՐՈԶՉՄԱՐԿԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Թեկնածուներն իրենց քարոզարշավների վրա իրավունք ունեին ծախսել մինչեւ 70,000,000 դրամ (մոտ 155,000 եվրո): Քարոզարշավի ֆինանսավորումը կարգավորող իրավական դրույթները վերջերս փոփոխվել էին՝ ապահովելով ավելի բարձր թափանցիկություն եւ նախատեսելով խիստ տույժեր դրանք չհամապատասխանելու համար<sup>38</sup>: Օրինակ,

<sup>35</sup> Օրինակ՝ Օձունում (Լոռի) վարչապետ Սարգսյանի քարոզչական պաստառները փակցված էին տեղական ինքնակառավարման շինության վրա (քաղաքապետարանում): Գյումրիում Հանրապետական կուսակցության մեծ պաստառներ էին փակցված որոշ տեղական ինքնակառավարման շինությունների մուտքերի մոտ: Ստեփանավանում (Լոռի) Սերժ Սարգսյանի հսկայական պաստառը կախված էր կենտրոնական հրապարակում գտնվող թանգարանի շենքից:

<sup>36</sup> Աշխատանքային խումբը ստեղծվել էր Կառավարության աշխատակազմին առընթեր: (Որոշում No. 855-A, 04-12-07):

<sup>37</sup> Փետրվարի 3-ին Հ1-ը ցույց է տվել խմբից «աջակցություն» ստացած քաղաքացիների, ովքեր գովաբանել են վարչապետին: Երեւանի քաղաքապետի կողմից արված մեկնաբանությունները քաղաքային իշխանությունների կողմից քաղաքացիների բողոքների եւ խնդրանքների բավարարման համար արված քայլերի մասին նույնպես լայնորեն լուսաբանվել է լրատվամիջոցների կողմից:

<sup>38</sup> Թեկնածուները պետք է բացեն հատուկ բանկային հաշիվ քարոզարշավի մուտքերի եւ ծախսերի համար: Եթե թեկնածու բանկային այս հիմնադրամից բացի որեւէ այլ ֆինանսական միջոցներ օգտագործի, ապա ԿԸՀ-ն կարող է դիմել դատարան թեկնածուի գրանցումը ուժը կորցրած ճանաչելու համար: Բանկը, որում պահվում են հաշիվները, ամեն երեք օրը մեկ պետք է ԿԸՀ տեղեկացնի մուտքերի

վճարովի հեռուստագովազդ, տպագիր նյութերի եւ գովազդային վահանակների օգտագործման ծախսերը պետք է հաշվառվեն: Այնուամենայնիվ, սովորաբար քարոզարշավի հետ կապ ունեցող այլ ծախսերի (հաղորդակցություն, տրանսպորտ, տարածքների վարձույթ, քարոզարշավային միջոցառումների կազմակերպում եւ այլն) հայտարարագրման հարցում հստակության պակաս կար<sup>39</sup>:

Մինչ օրենսգիրքը արգելում է թեկնածուներին ֆինանսավորել քարոզարշավներն «այլ ֆինանսական միջոցներից»<sup>40</sup>, այն հատուկ չի սահմանում «նյութական ապրանքների» նշանակությունը, այն է որեւէ ապրանք կամ ծառայություն, որ կարելի է անվճար տրամադրվել թեկնածուին<sup>41</sup>: Հետեւապես, գոյություն ունեւ քարոզարշավի հավասար պայմաններ ապահովելու համար սահմանված ծախսերի առավելագույն չափը շրջանցելու հնարավորություն:

ԿԸՀ կայքում հրապարակված թեկնածուների արած ծախսերի հայտարարագրումները ցույց են տալիս թեկնածուների ունեցած եւ ծախսած ֆինանսական ռեսուրսների մեծ տարբերություն<sup>42</sup>: Օրենսգիրքն<sup>43</sup> արգելում է որոշակի միավորների, այդ թվում նաեւ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպությունների, նվիրատվություններ անել: Վարչապետ Սարգսյանը նվիրատվություններ է ստացել Պետական տնտեսագիտական ինստիտուտից (Գյումրու մասնաճյուղ) եւ Սեւանի Հոգեբուժարանից: Դրանք վերադարձվել են պետական բյուջե:

## X. ԼՐԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Հեռուստատեսությունը տեղեկատվության ամենաազդեցիկ աղբյուրն է հանդիսանում: Հանրային հեռարձակողը՝ Հ1-ը ծածկում է երկրի ողջ տարածքը եւ ամենանշանակալի լրատվամիջոցն է: Առնվազն երեք մասնավոր հեռուստալիքներ՝ Հ2-ը, Արմենիա եւ ԱԼՄ հեռուստաընկերությունները, ծածկում են Հայաստանի տարածքի մեծ մասը: Կան բազմաթիվ մասնավոր տպագիր լրատվամիջոցներ եւ երկու պետական ֆինանսավորմամբ թերթ՝ Հայաստանի Հանրապետություն եւ Республика Армения: Այդուհանդերձ, շրջանառության ցածր ծավալի պատճառով տպագիր մամուլը, ընդհանուր առմամբ, չունի նշանակալի ազդեցություն:

Եւ գործարքների մասին, իսկ թեկնածուները մինչ հունվարի 31-ը եւ փետրվարի 25-ը պետք է ԿԸՀ ներկայացնեն նվիրատվություններին վերաբերող մանրամասները:

<sup>39</sup> Վարչապետ Սարգսյանի քարոզարշավի հաշվետվության մեջ հիմնականում բաժանելու նպատակով քարոզչական նյութերի (օրինակ՝ օրացույցեր, դրոշներ, անվանաթերթեր, գրիչներ եւ այլն), լրատվամիջոցների գովազդների, պաստառների պատրաստման եւ դրանց տեղադրման ծախսերն էին: Ներառված չէին գրասենյակային տարածքի, հեռահաղորդակցման, համակարգչային սարքավորումների, տրանսպորտային միջոցների կամ աշխատակազմի հետ կապված ծախսեր: Քարոզարշավի ծախսերի պարոն Տեր-Պետրոսյանի հաշվետվություններում ծախսերի այս տեսակները նույնպես բացակայում էին:

<sup>40</sup> Ընտրական օրենսգիրք, հոդված 79(9) եւ 79(10):

<sup>41</sup> ԿԸՀ-ն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին հայտնել է, որ աջակիցը կարող է անվճար հիմունքներով նախընտրական գրասենյակ տրամադրել, մինչդեռ «նվիրաբերված» մեծաքանակ տպագրական նյութերի արժեքը պետք է ներառվի հաշվետվություններում:

<sup>42</sup> Վարչապետ Սարգսյանը ստացել է օգտագործել է 70,000,000 դրամ, պարոն Հովահննիսյանը՝ 60,674,000 դրամ, պարոն Բաղդասարյանը՝ 46,465,000 դրամ, պարոն Տեր-Պետրոսյանը՝ 36,388,300 դրամ, պարոն Գեղամյանը՝ 14,600,000 դրամ, պարոն Մանուկյանը՝ 7,881,000 դրամ, պարոն Կարապետյանը՝ 15,020,000, պարոն Հարությունյանը՝ 190,000 դրամ: Պարոն Մելիքյանը չունեւ քարոզարշավի նվիրատվություններ:

<sup>43</sup> Ընտրական օրենսգիրք, հոդված 25(2):

Երկարատեւ մտահոգություններ գոյություն ունեն հեռարձակվող լրատվամիջոցների անկախության վերաբերյալ<sup>44</sup>: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ գրուցակիցները, մասնավորապես, մտահոգված էին խմբագրական որոշումների վրա քաղաքական եւ գործարար շահերի մեծ ազդեցության, լրատվամիջոցների ֆինանսական խոցելիության, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային խորհուրդի (ՀՌԱԽ) ոչ ադեկվատ կանոնակարգման եւ անկախության, ինչպես նաեւ լրագրողների եւ լրատվամիջոցների դեմ գործողությունների հարցերով<sup>45</sup>:

Չնայած լրատվամիջոցների հարաբերականորեն մեծ թվին, տեղեկատվություն այլընտրանքային նշանակալի աղբյուրներ չկան: Ա1+-ը, որն իր հեռարձակման լիցենզիան կորցրել է 2002 թվականին, շարունակում է մնալ եթերից դուրս<sup>46</sup>: Թեեւ Ազատություն ռադիոյի հեռարձակումը FM<sup>47</sup> հաճախականությամբ եւ Ա1+-ի համացանցային կայքն առաջարկում են այլընտրանքային քաղաքական տեղեկատվություն, դրանք հասանելի չեն բոլոր քաղաքացիներին:

Հիմնական հեռարձակվող լրատվամիջոցի կողմից եթեր տրվող քաղաքական տեսակետներում, ընդհանուր առմամբ, չկա բազմազանություն<sup>48</sup>: Հասարակական կարծիքը ադեկվատ կերպով չի իրազեկվում, օրինակ, քաղաքական կարծիքների փոխանակման եվ բանավեճի, կամ լրագրողական հետաքննության, մեկնաբանության եւ վերլուծության միջոցով: Սա իր հետեւանքներ ունի ընտրական շրջանում, երբ թեկնածուները պետք է կարողանան ազատ ներկայացնել իրենց տեսակետները եւ կարծիքները, իսկ ընտրողները պետք է կարողանան իմանալ դրանց մասին եւ քննարկել դրանք, ինչպես որ ստանձվել է 1990 թվականի Կոպենհագենի փաստաթղթի 7.7 կետի համաձայն:

## Ա. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԴՄՇՏԸ

Սահմանադրությունը ապահովում է խոսքի ազատություն եւ տեղեկատվության ազատություն: Հեռուստատեսության եւ ռադիոհեռարձակման մասին օրենքը (Հեռարձակման մասին օրենք) արգելում է գրաքննությունը, իսկ Քրեական օրենսգրքով գրպարտության եւ վիրավորանքի համար նախատեսվում է ազատազրկում: Ընտրական օրենսգրքի պահանջով հանրային եւ մասնավոր լրատվամիջոցները պետք է «անկողմնակալ եւ չքննադատող» տեղեկատվություն ներկայացնեն թեկնածուների

<sup>44</sup> Օրինակ՝ տե՛ս Հայաստանում լրատվամիջոցների ազատության վիճակը. Դիտարկումներ եւ առաջարկություններ. Լրատվությունների ազատության գծով ԵԱՀԿ ներկայացուցիչ (ԼԱՆ), 26 հուլիսի 2006 թվականի [http://www.osce.org/documents/oy/2007/05/24699\\_en.pdf](http://www.osce.org/documents/oy/2007/05/24699_en.pdf):

<sup>45</sup> Օրինակ՝ 2007 թվականի վերջին Հայաստանի հարկային մարմինները սկսեցին հետաքննել Գյումրիում տեղակայված «Գալա» հեռուստաընկերության գործն՝ այն բանից հետո, երբ այն հեռարձակել էր պարոն Տեր-Պետրոսյանի՝ նախագահական ընտրություններին մասկակցելու մտադրության մասին հայտարարությունը: 2007 թվականի դեկտեմբերին ԵԱՀԿ ԼԱՆ-ը մտահոգություն հնչեցրեց, որ «անկախ եւ ընդդիմադիր լրատվամիջոցների նկատմամբ վերջերս տեղի ունեցող ոտնձգություններն ու բռնությունը սաստկացնում է լրագրողական համայնքում տիրող ահաբեկման մթնոլորտը», տե՛ս՝ [http://www.osce.org/fom/item\\_1\\_29104.html](http://www.osce.org/fom/item_1_29104.html):

<sup>46</sup> Ա1+-ն այս առնչությամբ գործ է հարուցել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Սույն դեկույցի գրման ժամանակահատվածում դատարանը դեռեւս վճիռ չէր կայացրել:

<sup>47</sup> 2007 թվականի օգոստոսին Հանրային ռադիոն դադարեց իր հաճախականությամբ բոլոր տեղական եւ արտասահմանյան հեռարձակողներին եթերի տրամադրումը, այդ թվում՝ Ազատության ռադիոկայանին: Սա, *de facto*, նվազեցրեց ռադիոկայանի հանրամատչելիությունը:

<sup>48</sup> Տե՛ջս ԵԱՀԿ ԼԱՆ զեկույցը «Հայաստանում լրատվամիջոցների ազատության վիճակի մասին» (26 հուլիսի, 2006 թ.)՝ [http://www.osce.org/documents/oy/2007/05/24699\\_en.pdf](http://www.osce.org/documents/oy/2007/05/24699_en.pdf):

քարոզարշավների մասին, ինչպես նաև հավասար պայմաններ երաշխավորել զանգվածային լրատվամիջոցների մատչելիության առումով<sup>49</sup>:

Օրենքով յուրաքանչյուր թեկնածու իրավունք ունի անվճար հիմունքներով ստանալ մինչև 60 րոպե եթերաժամ հանրային հեռուստատեսությամբ եւ մինչև 120 րոպե հանրային ռադիոյով: Թեկնածուները կարող են նաև վճարովի հիմունքներով ձեռք բերել մինչև 120 րոպե եթերաժամ Հանրային հեռուստատեսությամբ եւ մինչև 180 րոպե հանրային ռադիոյով: Թեկնածուների անվճար եւ վճարովի լուսաբանման հերթականությունը որոշվել է վիճակահանությամբ: Հանրային լրատվամիջոցները համապատասխանել են անվճար եթերաժամի տրամադրման իրենց իրավական պարտավորությանը, եւ թեկնածուները կարողացել են ազատորեն փոխանցել իրենց քաղաքական ուղերձները: Այնուամենայնիվ, չնայած 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ հնչեցված քննադատությանը, հեռարձակումը կրկին տեղի էր ունենում մեծ մասամբ ամենամեծ հեռուստալսարանն ապահովող հեռուստաժամից (primetime-ից) դուրս, այդպիսով, ըստ հնարավորին, նվազեցնելով թեկնածուների տեսակետներին ծանոթանալու ընտրողների հնարավորությունը<sup>50</sup>:

#### Բ. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒԽՏՈՐԻՆԳԸ

2008 թվականի հունվարի 11-ից ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն սկսել է իրականացնել յոթ հեռուստաալիքների, երկու ռադիոկայանների եւ չորս թերթերի մոնիթորինգ, որպեսզի գնահատի թեկնածուների համար լրատվամիջոցների անարգել եւ հավասարության հիմքերով մատչելիությունը, լրատվամիջոցների կողմից թեկնածուների հավասարակշռված լուսաբանումը (ժամանակի եւ տոնի առումով), ինչպես նաև պետական պաշտոնյաների անկողմնակալ լուսաբանումը<sup>51</sup>:

Հունվարի 11-20 ընկած ժամանակահատվածում (քարոզարշավի պաշտոնական մեկնարկից առաջ), չորս հեռուստաալիքների լուրերի թողարկումներում վարչապետ Սարգսյանին շնորհվել է արտոնյալ վերաբերմունք. նրան է հասկացվել բոլոր թեկնածուներին տրամադրված ժամանակի մոտ կեսը, իսկ լուսաբանումը եղել է գրեթե բացառապես դրական կամ չեզոք կերպով<sup>52</sup>: Նկատելի հակադրությամբ՝ այս լրատվամիջոցները թեկնածուներից մեկին՝ պարոն Տեր-Պետրոսյանին հաճախ պատկերել են բացասական կամ չեզոք կերպով:

<sup>49</sup> Ընտրական օրենսգիրք՝ հոդվածներ 20(3), 20(5) եւ 18(3):

<sup>50</sup> ԿԸՀ-ն իրավասու է որոշել անվճար հեռարձակման ժամատախտակը (Ընտրական օրենսգիրք, հոդված 20(2)): Այն ընդունել է Հանրային հեռուստատեսության եւ ռադիոյի խորհրդի առաջարկությունը՝ հեռարձակումը սկսել ժամը 17:15-ին:

<sup>51</sup> Հունվարի 11-ին փետրվարի 17-ը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն մոնիթորինգ է իրականացրել 21 (հանրային հեռարձակող), ԱԼՄ, Արմենիա, 22 (երկրի ողջ տարածքում ծածկույթ ունեցող ալիքներ), Կենտրոն, Շանթ, Երկիր Մեդիա հեռուստաալիքների, Հանրային ռոդիոյի եւ Ազատություն ռադիոկայանի, Հայաստանի Հանրապետություն (պետական ֆինանսավորմամբ), Առավոտ, ԱԶԳ եւ Հայկական ժամանակ թերթերի վրա: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ-ն հեռուստաալիքների մոնիթորինգն իրականացրել է ժամը 18.00-00.00-ն: Հանրային հեռուստաալիքի մոնիթորինգը եղել է ժամը 17.15-00.00-ն՝ քարոզարշավի պաշտոնական մեկնարկից՝ հունվարի 21-ից հետո: Այս ժամերին հեռարձակվող ողջ նյութը ենթարկվել է մոնիթորինգի՝ ուշադրությունը կենտրոնացնելով լուրերի, ընթացիկ գործերին վերաբերող ծրագրերի, հարցազրույցների/թոք շոունների եւ գովազդների (բոլոր ալիքների վճարովի եւ H1-ի անվճար) վրա: Լուրերի հիմնական երեկոյան ծրագրերը մոնիթորինգի են ենթարկվել Հանրային ռադիոյի դեպքում ժամը 18.00-19.00 եւ Ազատություն ռադիոկայանի դեպքում ժամը 19.00-20.00-ը:

<sup>52</sup> 22-ով Սերժ Սարգսյանին ստացել է լուրերի բոլոր ինը թեկնածուներին հասանելիք ժամանակի 66 տոկոսը: Մյուս հեռուստաալիքների պատկերը հետևյալն է՝ Կենտրոն (56 տոկոս), Շանթ (53 տոկոս), Արմենիա (48 տոկոս):

Քարոզարշավի պաշտոնական ժամանակահատվածում լրատվամիջոցները նախընտրական միջոցառումները լայնորեն լուսաբանել են լուրերի թողարկումներով, թեկնածուներին պատկերող կտորներով եւ թոք-շոուններով: Հեռուստատեսությունը թեկնածուներին հնարավորություն էն ընձեռել հայտնվել իրենց հաղորդումներում: Պարոն Տեր-Պետրոսյանը չի ընդունել նման ոչ մի առաջարկ, իսկ վարչապետ Սարգսյանը ընդունել է միայն մեկը: Չնայած որոշ լրատվամիջոցների՝ օրինակ, Երկիր Մեդիայի ջանքերի, թեկնածուների միջե ոչ մի բանավեճ տեղի չունեցավ, ըստ երեւոյթին թեկնածուների կողմից հետաքրքրվածության պակասի պատճառով:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ կողմից մոնիտորինգի ենթարկված հեռարձակվող լրատվամիջոցների մեծ մասը նախընտրական քարոզարշավի ընթացքում քաղաքական լուսաբանմամբ հասավարություն չեն ցուցաբերել. պարոն Տեր-Պետրոսյանը ստացել է բացասական լուսաբանման մեծ ծավալ, մինչդեռ վարչապետ Սարգսյանը՝ ամենաշատ լուսաբանված թեկնածուն, ստացել է բացահայտ դրական լուսաբանում: Այլ թեկնածուները ներկայացվել են դրական կամ չեզոք կերպով: Շատ լրատվամիջոցներ որդեգրել էին հակադիր մոտեցումներ մի կողմից պարոն Տեր-Պետրոսյանի, իսկ մյուս կողմից վարչապետ Սարգսյանի քարոզարշավների լուսաբանման հարցում: Այս գործոնները ցուցադրում էին լրատվամիջոցների կողմնակալություն, որը քարոզարշավային առավելություն էր տալիս վարչապետ Սարգսյանին:

Հանրային հեռարձակող Հ1-ն իր լուրերի լուսաբանման ժամանակ թեկնածուներին տրամադրել է ողջամիտ հավասար եթերաժամ<sup>53</sup>: Այդուհանդերձ, այն բոլոր թեկնածուներին հավասար կերպով չի վերաբերվել: Չնայած նրան, որ պարոն Տեր-Պետրոսյանը ամենաշատ լուսաբանված թեկնածուն էր (ընդհանուր ժամանակի առումով), նրա լուսաբանման մեծ մասը բացասական տոնով էր արված: Մյուս ութ թեկնածուներին Հ1-ը տրամադրել է դրական կամ չեզոք լուսաբանման մեծապես հավասար ծավալ: Հանրային ռադիոյի մոտեցումը նման է եղել Հ1-ի մոտեցմանը:

Պարոն Տեր-Պետրոսյանը նաեւ մեծապես բացասական լուսաբանում է ստացել Հ2, ԱԼՍ, Կենտրոն եւ Երկիր մեդիա հեռուստատեսությունների կողմից: Սա մասամբ պայմանավորված էր այն հաճախականությամբ, որով նախագահ Քոչարյանը եւ որոշ թեկնածուներ, մասնավորապես Արտաշես Գեղամյանը, քննադատել են նրան: Պարոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ տարբերվող մոտեցման կիրառումը նաեւ տեսանելի էր նրա լուրերի լուսաբանման մեջ: Օրինակ Հ1-ը պարբերաբար աղավաղում էր նրա քարոզարշավի միջոցառումների կադրերը<sup>54</sup>, իսկ որոշ լրատվամիջոցներ էթեր էին արձակում պարոն Տեր-Պետրոսյանի՝ Թալինում եւ Արտաշատում քարոզարշավի հանրահավաքների միջադեպերը միակողմանի լուսաբանող կադրեր: Բացառությամբ Ազատություն ռադիոկայանի, քչերն են հեռարձակել իշխանություններին ուղղված քննադատություն, հատկապես նախագահ Քոչարյանի եւ վարչապետ Սարգսյանի վերաբերյալ պարոն Տեր-Պետրոսյանի կողմից արված քննադատական ակնարկները:

<sup>53</sup> Պարոն Տեր-Պետրոսյան (21 տոկոս), վարչապետ Սարգսյան (19), Արթուր Բաղդասարյան (14), Արտաշես Գեղամյան (13), Վահան Հովհաննիսյան եւ Վազգեն Մանուկյան (յուրաքանչյուրը 11), Արամ Հարությունյան եւ Տիգրան Կարապետյան (յուրաքանչյուրը 4) եւ Արման Մելիքյան (3):

<sup>54</sup> Օրինակ՝ էթեր արձակելով քարոզարշավի պասսիվ եւ փոքր լսարաններ պատկերող կադրեր, մինչդեռ պարոն Տեր-Պետրոսյանի կողմից իր անվճար եւ վճարովի էթերաժամում օգտագործվող կադրերում երեւում էր ոգևորված աջակցություն:

Մոնիտորինգի ենթարկված վեց մասնավոր հեռուստալիքներից հինգի եթերում վարչապետ Սարգսյանն «ամենաշատ լուսաբանված» թեկնածուն էր՝ առաջին հերթին թեկնածուի իր դերում<sup>55</sup>: Մոնիտորինգի ենթարկված մասնավոր հեռուստալիքների մեծ մասը կողմնակալություն են դրսևորել վարչապետ Սարգսյանին դրական լուսաբանման մեծ ծավալ տրամադրելով: Հեռուստակայանները հետևողական կերպով վարչապետ Սարգսյանի հանրահավաքները կադրերը ցուցադրել են մեկ օր ուշացումով եւ հեռարձակել են նմանատիպ կադրեր, ինչը ենթադրում է հնարավոր համակարգվող խմբագրական քաղաքականության գործադրում:

Մասնավոր լրատվամիջոցների կողմից մյուս յոթ թեկնածուներին տրված լուսաբանումը եղել է ընհանուր առմամբ հավասարակշռված (լուսաբանումն ունեցել է դրական կամ չեզոք տոն), թեև այն մեծապես գուրկ է եղել քննադատական գնահատականից:

Պետական ֆինանսավում ունեցող Հայաստանի Հանրապետություն թերթը հստակ արտոնյալ վերաբերմունք է ցուցաբերել վարչապետ Սարգսյանի նկատմամբ՝ նրան տրամադրելով թեկնածուներին հատկացված տարածքի 45 տոկոսը եւ լուսաբանելով ընդհանուր առմամբ դրական տոնով: Մասնավոր թերթ Հայկական ժամանակը ցուցաբերել է հստակ կողմնակալություն պարոն Տեր-Պետրոսյանի հանդեպ՝ նրան տրամադրելով թեկնածուներին հատկացված իր տպագրական տարածքի 56 տոկոսը՝ հիմնականում դրական լուսաբանմամբ: Ավելի հավասարակշռված եւ քննադատական լուսաբանում է դիտարկվել Առավոտ օրաթերթում:

Ընդհանուր առմամբ, իշխանությունները զգայուն էին ցանկացած ակնարկի հանդեպ, որ կարող էր որպես քննադատական հասկացվել, եւ, ինչպես 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ, լրատվամիջոցները չէին ցանկանում կամ չէին կարողանում հեռարձակել գործող իշխանություններին քննադատող կարծիքներ<sup>56</sup>:

#### Գ. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԴԻՄՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԲՈՂՈՔՆԵՐԸ

Ոչ ԿԸՀ-ն եւ ոչ էլ ՀՌԱԽ-ը չապահովեցին, որ լրատվամիջոցները համապատասխանեն թեկնածուներին հավասար վերաբերվելու իրենց իրավական պարտավորությանը: ՀՌԱԽ-ը պետք է վերահսկի լրատվամիջոցների ընդհանուր համապատասխանությունը նրանց վերաբերող իրավական դրույթներին<sup>57</sup>: Այդուհանդերձ, այն համակարգված մոնիտորինգ չի իրականացրել լրատվամիջոցների հեռարձակումների վրա: Հեռարձակման մասին օրենքի 2007 թվականի նոյեմբերյան փոփոխումների համաձայն ՀՌԱԽ-ը անհամապատասխանության դեպքում կարող է դատարանում գործ հարուցել<sup>58</sup>: ԿԸՀ-ն

<sup>55</sup> ԱԼՄ, Արմենիա, Կենտրոն, 22 եւ Շանթ հեռուստալիքություններ:

<sup>56</sup> Ընտրությունների շրջանում արտահայտման ազատության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կառավարություններին կոչ է արել «ցուցաբերել ինքնահսկողություն» եւ ընդունել, որ նույնիսկ վիրավորական, ապշեցուցիչ կամ անհանգստացնող ելույթները կարող են նպաստել բազմակարծությանը, եւ սովորաբար պետք է հանդուրժվեն ժողովրդավարական հասարակություններում: Նշվածը հատկապես ճշմարիտ է նախընտրական քարոզարշավների համար եւ այն ելույթների համար, որոնց «թիրախն են» կառավարությունը, ընտրված պաշտոնյաները եւ թեկնածուները: Տե՛ս «ԵԱՀԿ մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների համար գոյություն ունեցող պարտավորությունները», (էջ 69-70), Վարչակա, հոկտեմբեր 2003՝ [www.osce.org/documents/odihr/2003/10/772\\_en.pdf](http://www.osce.org/documents/odihr/2003/10/772_en.pdf):

<sup>57</sup> Ընտրական օրենսգիրք, հոդված 20(9):

<sup>58</sup> Հեռարձակման մասին օրենք, հոդված 37.2:



պետք է «վերահսկի, որպեսզի ԶԼՄ-ները քարոզարշավ իրականացնելու համար հավասար պայմաններ ապահովեն»<sup>59</sup>: Լրատվամիջոցներին առնչվող խնդիրները երկու մարմինների տալը շփոթմունք առաջացրեց իրավասության վերաբերյալ<sup>60</sup>: ՀՌԱՄ-ը լրատվամիջոցների կողմից քարոզարշավի անհավասար լուսաբանմանը վերաբերող երեք բողոք է ստացել: Բոլոր բողոքները մերժվել են<sup>61</sup>:

Փետրվարի 11-ին Սահմանադրական դատարանը որոշում կայացրեց պարոն Տեր-Պետրոսյանի կողմից բերված գործի առնչությամբ, որում նա պնդում էր, որ հանրային հեռուստատեսության կողմից քարոզարշավային անհավասար պայմանների ստեղծման պատճառով ինքն «անհաղթահարելի խոչընդոտի» առաջ էր կանգնել: Դատարանը վճռեց, որ բողոքը Սահմանադրության տեսանկյունից «անհաղթահարելի խոչընդոտ» չէր պարունակում, բայց նշեց, որ բողոքը պատկանում է այլ պաշտոնյաների եւ մարմինների իրավասությանը<sup>62</sup>:

## XI. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԲՈՂՈՔՆԵՐԸ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ գրուցակիցները հաճախ են արտահայտել դատական անկախության եւ բողոքների քննման այլ մեխանիզմների արդյունավետության հանդեպ իրենց անվստահությունը:

Ընտրական իրավախախտումները թվարկված են Ընտրական օրենսգրքում, Քրեական օրենսգրքում եւ Վարչական դատավարության օրենսգրքում: Լիովին չի հստակեցվում, թե յուրաքանչյուր դեպքում որ դատարանի իրավասության ներքո է Ընտրական օրենսգրքի գլուխ 31-ում թվարկված իրավախախտումների քննությունը: ՏՀՀ որոշումները, գործողությունները եւ անգործությունը կարող են բողոքարկվել ԸՀ-ում: Օրենսգրքի 2007 թվականի դեկտեմբերյան փոփոխությունների համաձայն Վարչական դատարանն իրավասու է քննել ընտրություններին առնչվող բողոքների մեծ մասը, այդ թվում նաեւ ԸՀ եւ ԿՀ որոշումներին առնչվողները: Այդուհանդերձ, մասնակիցները հազվադեպ են օգտագործել այս հնարավորությունը, եւ դատարանը լսել է ընտրություններին առնչվող միայն չորս գործ<sup>63</sup>: Մինչ ընտրությունները Սահմանադրական դատարանը քննել է ընտրություններին առնչվող երկու գործ<sup>64</sup>:

<sup>59</sup> Ընտրական օրենսգրք, հոդված 41(1.5): Ի հավելումն, Ընտրական օրենսգրքի հոդված 139(29)-ի համաձայն բոլոր թեկնածուներին հավասար պայմաններ չապահովելու համար պետական լրատվամիջոցները կարող են պատասխանատվության ենթարկվել:

<sup>60</sup> Այնուամենայնիվ, չնայած ակնհայտորեն հստակ իրավական դրույթների՝ ԿՀ-ն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին հայտնել է, որ միայն ՀՌԱՄ-ն է պատասխանատու իրավական դրույթներին լրատվամիջոցների համապատասխանությունը վերահսկելու համար:

<sup>61</sup> 2008 թվականի մարտի 7-ին ՀՌԱՄ կողմից տրամադրված տվյալներ:

<sup>62</sup> Սահմանադրության հոդված 52-ի (ինչպես նաեւ Ընտրական օրենսգրքի հոդված 90(2)-ի) համաձայն, եթե թեկնածուն կանգնում է անհաղթահարելի խոչընդոտների առջեւ, ընտրությունները պետք է հետաձգվեն երկու շաբաթով: Եթե այդ ժամանակահատվածում խոչընդոտը չի վերացվում, պետք է կազմակերպվեն նոր ընտրություններ: Պարոն Տեր-Պետրոսյանը նույնպես բողոքով դիմել է ԿՀ-ին՝ մինչ նախընտրական քարոզարշավն ու դրա ընթացքում ՀՀ-ի լուսաբանման առնչությամբ, եւ պահանջել, որ բոլոր թեկնածուների համար ապահովվեն հավասար պայմաններ: ԿՀ-ն բողոքն ուղղել է ՀՌԱՄ, որն այն մերժել է, ակնհայտորեն ֆորմալ հիմքերով:

<sup>63</sup> Չորս այլ գործեր մերժվել են իրավասության պակասի կամ դիմումներում տեխնիկական թերությունների պատճառով:

<sup>64</sup> Առաջին դեպքում, այն վճռեց, որ Արման Մելիքյանը, որպես նախագահի թեկնածու, իրավունք չունի գործ հարուցել Հայաստանից դուրս քվեարկության դրույթի սահմանադրականության վերաբերյալ: Երկրորդը վերաբերում էր պարոն Տեր-Պետրոսյանի լրատվամիջոցների վերաբերյալ վերանշյալ բողոքին:

Ընտրական հանձնաժողովները պարտավոր են հաշվի առնել քաղաքացիներից եւ թեկնածուների վստահված անձանցից ստացված բողոքները, թեեւ օրենսգիրքը չի պահանջում, որ դրանք քննարկվեն պաշտոնական նիստերի ժամանակ, ինչը օրենսդրության մեծ թերություն է: Մինչեւ ընտրությունների օրը ԿԸՀ-ն ստացել է 93 բողոք՝ հիմնականում լրատվամիջոցների կողմից թեկնածուների անհավասար վերաբերմունքի, վարչապետ Սարգսյանի կողմից քարոզարշավում վարչապետի պաշտոնի օգտագործման եւ քարոզարշավային միջոցառումներ կազմակերպելիս պարոն Տեր-Պետրոսյանի հանդիպած խոչընդոտների առնչությամբ: Դրանցից շատերը քննարկվել են ոչ պաշտոնական հանդիպումների ժամանակ, որոնց հրավիրված չեն եղել վստահված անձինք, դիտորդներ եւ լրատվամիջոցներ: Մովորաբար բողոքները մերժվել են<sup>65</sup>: Փետրվարի 17-ին ԿԸՀ մեկ որոշմամբ որպես անհիմն մերժել է քարոզարշավի դրույթների խախտումների մասին 25 բողոք, եւ փետրվարի 18-ին մեկ նամակով մերժել 30 բողոք: ԿԸՀ-ն հաճախ պաշտոնական որոշումների փոխարեն տվել է գրավոր «պատասխաններ»:

ԿԸՀ-ն բավարար քննություն չի արել բացահայտելու, թե արդյոք բողոքներն ունեն փաստացի հիմքեր: Օրինակ, ԿԸՀ-ն բողոք է ստացել այն մասին, որ վարչապետ Սարգսյանը քարոզարշավի համար օգտագործում է վարչապետի պաշտոնը այն աշխատանքային խմբի միջոցով, որ ստեղծել էր Կառավարության աշխատակազմին առընթեր<sup>66</sup>: Այն որոշում է ընդունել պաշտոնապես մերժել բողոքը: Որոշումը բողոքարկվել է Վարչական դատարանում, որը վճռել է, որ վարչապետն իրավասու էր ստեղծել աշխատանքային խումբ եւ հայցը մերժել է<sup>67</sup>: Ոչ ԿԸՀ առաջնային որոշումը եւ ոչ էլ դատարանի վճիռը չեն անդրադարձել գործի էությանը, այն է՝ արդյոք վարչապետը քարոզարշավ էր իրականացնում իր պաշտոնական պարտականությունները կատարելիս, ինչը հակասում է օրենսգրքի հոդված 22.1(1)-ին:

Գլխավոր դատախազությունը ստեղծել էր հատուկ աշխատանքային խումբ՝ ընտրություններին առնչվող քրեական իրավախախտումները հետաքննելու համար: Այն 200-ից ավելի գործեր է հարուցել քաղաքացիներից, ԿԸՀ-ից եւ կուսակցություններից ստացված, քարոզարշավային միջոցառումների միջադեպերի եւ ընտրական իրավախախտումների մասին լրատվամիջոցների զեկույցների բողոքների հիման վրա: Մարդու իրավունքների պաշտպանը բացել էր թե՛ զիծ, որպեսզի քաղաքացիները կարողանան ընտրությունների օրը բողոքներ հայտնել, եւ հավաքագրել էր շտապ արձագանքի թիմ խնդիրները հետաքննելու եւ համապատասխան մարմնին ուղարկելու համար:

## XII. ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի քաղաքական կյանքում կանայք լավ ներկայացված չեն՝ խորհրդարանի միայն 12 պատգամավոր եւ կառավարության մեկ նախարար են կին: Նախագահական թեկնածուների շարքում ոչ մի կին չկար: Ընտրությունների վարչարարության մեջ ԿԸՀ ութ

<sup>65</sup> Միայն մեկ բողոք է վճռվել հօգուտ դիմումատուի՝ ՏԸՀ անդամի, որին ԸԸՀ-ն արգելել էր տեսնել փաստաթղթերը:

<sup>66</sup> Տե՛ս սույն զեկույցի IX(Գ) բաժինը:

<sup>67</sup> Նույն բողոքում դիմումատուն ասում է, որ ԿԸՀ-ն Վարչական դատարանությունների ակտի պահանջների համաձայն որոշումներ չի կայացրել: Մերժելով դիմումի այս մասը՝ դատարանը առաջնորդվոց նրանով, որ բողոքներին ի պատասխան ԿԸՀ որոշումները «վարչական չեն» եւ, հետեւապես, կարող են չհամապատասխանել այնպիսի պահանջների, ինչպիսին է դիմումատուին թույլատրել ներկա գտնվել քննմանը:

անդամներից երկուսը կին էին: ԸԸՀ-ների անդամներից միայն 36-ն էին կին (մոտ 18 տոկոս), իսկ վեց ԸԸՀ-ներ ամբողջովին բաղկացած են տղամարդկանցից: Միայն երեք ԸԸՀ նախագահն էին կին (մոտ 7 տոկոս) եւ ՏԸՀ-ների 24 տոկոսի նախագահները էին կին: Արթուր Բաղդասարյանի քարոզարշավը ղեկավարվում էր կնոջ կողմից, մյուս քարոզարշավներում գերակշռողը տղամարդիկ էին: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՂԱ դիտորդները զեկույցել են, որ թեկնածուների քարոզարշավային միջոցառումների մեծ մասին կանանք մասնակցությունը մեծաքանակ չի եղել:

### XIII. ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԸ

Օրենսգիրքը նախատեսում է ընտրությունների միջազգային եւ տեղական դիտորդություն: ԿԸՀ-ն հավատարմագրել էր դիտորդներ վեց միջազգային կազմակերպություններից եւ ավելի քան 14,000 դիտորդ 39 հայկական ՀԿ-ներից, ներառյալ «Ընտրությունը քոնն է» (մոտ 4,000 դիտորդ) եւ «Ազատ հասարակության ինստիտուտ» (մոտ 1,600 դիտորդ) ՀԿ-ները: «Իրավական նախաձեռնություն» ՀԿ ցանցը թե՛ գծի միջոցով քաղաքացիներին տրամադրել է անվճար իրավական խորհրդատվություն եւ կազմավորել շտապ արձագանքման 40 թիմ՝ քաղաքացիներին աջակցություն ցույց տալու համար: Չնայած տեղական դիտորդական կազմակերպությունների մեծ թվին, շատ քչերն են հրապարակել հանրային հայտարարություններ իրենց հայտնաբերումների վերաբերյալ:

### XIV. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՇՎԱՐԿԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ

#### Ա. ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ընտրությունների օրը ԸՄԴԱ դիտորդները ընտրատեղամասերի բացումը դրական են գնահատել իրենց զեկույցների 97 տոկոսում: Ընտրատեղամասերը բացվել են ժամանակին՝ միայն աննշան ուշացումներով: Քվեարկության ընթացքում (ժամը 08:00-20:00) ԸՄԴԱ դիտորդները այցելել են 1,923 տեղամասից 1,010-ը՝ լրացնելով 1,184 դիտորդական ձեւեր եւ ավելի քան 550 գրավոր զեկույցներ: Ընդհանուր առմամբ, դիտարկման ժամանակ դիտորդները խոչընդոտների չեն հանդիպել՝ թեեւ վեց թիմ զեկույցել է, որ որոշ սահմանակափակումների կամ խոչընդոտների են հանդիպել<sup>68</sup>:

Թեկնածուների վստահված անձինք ներկա էին գրեթե բոլոր այցելած ընտրատեղամասերում<sup>69</sup>. որոշ տեղամասերում ԸՄԴԱ դիտորդները զեկույցել են, որ յուրաքանչյուր թեկնածուի համար ներկա էին մեկից ավելի վստահված անձինք, ինչը հակասում է օրենքին<sup>70</sup>: Տեղական դիտորդները ներկա էին այցելած տեղամասերի 85 տոկոսում՝ առավել հաճախ հանդիպել են դիտորդներ «Ընտրությունը քոնն է» ՀԿ-ից

<sup>68</sup> Օրինակ՝ 19/13 տեղամասում ՏԸԻ նախագահը եւ ոստիկանները ԸՄԴԱ դիտորդներին թույլ չեն տվել մտնել երկու անգամ: 34/21 ընտրատեղամասում ԸՄԴԱ դիտորդները զեկույցել են, որ իրենց ահաբեկել է 5-6 երիտասարդների մի խումբ, իսկ թարգմանչին ասել են, որ ոչինչ չթարգմանի:

<sup>69</sup> Օրինակ՝ պարոն Տեր-Պետրոսյանը վստահված անձինք ուներ ընտրատեղամասերի մոտ 88 տոկոսում, իսկ վարչապետ Սարգսյանը՝ մոտ 78 տոկոսում: Պարոն Հարությունյանը եւ պարոն Մելիքյանը՝ յուրաքանչյուրը վստահված անձինք ուներին ԸՄԴԱ դիտորդների կողմից այցելած տեղամասերի 9 տոկոսում:

<sup>70</sup> Օրինակ՝ 34/71 ընտրատեղամասում կային վարչապետ Սարգսյանի հինգ վստահված անձինք, եւ երկուական վստահված անձ պարոն Տեր-Պետրոսյանի եւ պարոն Բաղդասարյանի համար: Մեկ թեկնածուի բազմաթիվ վստահված անձանց մասին ԸՄԴԱ դիտորդները նաեւ զեկույցել են 1/19, 5/11 եւ 34/29 ընտրատեղամասերում:

(այցելած տեղամասերի մոտ 33 տոկոսում): Այցելած տեղամասերից 93-ում (8 տոկոս) տեղական դիտորդները կամ վստահված անձինք հայտնել են ընթացակարգային խնդիրների մասին, իսկ 16 տեղամասերում նրանք հայտնել են իրենց աշխատանքում հանդիպած խոչընդոտների մասին, օրինակ՝ թույլ չի տրվել մոտ կանգնել գործընթացն ավելի արդյունավետ վերահսկելու համար<sup>71</sup>:

Քվեարկությունը ԸՄԴԱ դիտորդների կողմից գնահատվել է որպես դրական ընտրատեղամասերի մոտ 95 տոկոսում: Այս ցուցանիշը նման է 2007 թվականի խորհրդարական ընտրություններին եւ զգալի բարելավում է 2003 թվականի նախագահական ընտրությունների համեմատությամբ: Նշվել են մարզային տարբերություններ՝ Տավուշում, Արմավիրում եւ Արագածոտնում գնահատականը եղել է ամենադրական: Այդուհանդերձ, նշանակալի խնդիրներ են զեկուցվել որոշ ընտրատեղամասերից, հատկապես Լոռի, Կոտայք մարզերում եւ Երեւան քաղաքի հատուկ համայնքներում (թիվ 1, 4, 5, 7 եւ 13 ԸՀ-ներ):

Չնայած ընտրատեղամասերում ոստիկանների գոյությանը, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՄԱ-ն ընտրությունների օրը ստացել է զեկույցներ ֆիզիկական հարձակումների մասին, եւ հարձակման ենթարկվածների անմիջական վկայությունները<sup>72</sup>: ԸՄԴԱ դիտորդները լարվածության կամ անկարգությունների մասին են զեկուցել այցելած 33 տեղամասերի շրջակա տարածքների վերաբերյալ (մոտ 3 տոկոս), այցելած 64 տեղամասերի ներսում (մոտ 6 տոկոս), ինչպես նաեւ ահաբեկման գործողությունների մասին այցելած 13 տեղամասերից դուրս եւ 22 տեղամասերի ներսում<sup>73</sup>: Մի քանի անգամ ՏՀՀ անդամներ հայտնել են, որ իրենց ահաբեկել են<sup>74</sup>: Փետրվարի 19-ին հաջորդեող օրերին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՄԱ-ն ավելի շատ զեկույցներ է ստացել տարբեր աղբյուրներին ընդդիմադիր վստահված անձանց, տեղական դիտորդների, ՏՀՀ անդամների եւ լրագրողների նկատմամբ կատարված հարձակումների կամ ահաբեկման մասին՝ հատկապես Երեւանում<sup>75</sup>:

Կուտակումները խնդիր են հանդիսացել այցելած տեղամասերի 15 տոկոսում, ինչը երբեմն ավելացրել է լարվածությանը, անկազմակերպվածությանը եւ թափանցիկության պակասին՝ *de facto* ազդելով քվեի գաղտնիության վրա: Ընտրատեղամասերում հաճախ նկատել են ոչ լիազորված անձանց՝ այդ թվում ոստիկանների (դիտարկված ընտրատեղամասերի մոտ 6 տոկոսում) եւ տեսական ինքնակառավարման մարմինների

<sup>71</sup> Օրինակ՝ թիվ 05/02, 05/10 եւ 07/05 ընտրատեղամասեր:

<sup>72</sup> Օրինակ՝ առաջնային վկայություններ են ստացվել 28/07 (Արմավյան) եւ 07/20 (Երեւան, Մալաթիա-Սեբաստիա), որտեղ նրանք հայտնել են քվեատուփի լցման փորձի մասին, եւ 01/10 տեղամասերում հարձակման ենթարկված վստահված անձանցից, ինչպես նաեւ Արմավյանի եւ Դավիթաշենի չորս ակտիվիստները, ովքեր մարմնական վնասվածքներ ունեին: ՏՀՀ երեք անդամների ուժով հանել են 07/05 (Երեւան, Մալաթիա-Սեբաստիա) տեղամասից: Լայն լուսաբանման է արժանացել Ժառանգություն կուսակցության երկու պատգամավորի եւ լրագրողի վրա 13/16 տեղամասում (Էրեբունի, Երեւան) կատարված հարձակման հաղորդումը:

<sup>73</sup> Օրինակ՝ 13/25 տեղամասում վարչապետ Սարգսյանի վստահված անձը ահաբեկել է ընտրողներին, որ իրենն ցույց տան քվեաթերթիկի վրա արված նշումները:

<sup>74</sup> Օրինակ՝ ԸՀ 26-ի մեկ տեղամասում ՏՀՀ անդամը հայտնել է, որ ստացել է հեռախոսային զանգ, եւ իրեն ասել են, ոչ չմիջամտի քվեների գնման գործընթացին, այլապես ընտրություններից հետո նրան կսպասվեն տհաճություններ:

<sup>75</sup> Օրինակ՝ Ավանում (Երեւան) երկու վստահված անձինք ստացել են հնարավոր ֆիզիկական հատուցման սպառնալիքներ եւ հարձակման է ենթարկվել մեկ ՏՀՀ անդամ: Արաբկիրում եւ Դավիթաշենում (Երեւան) ընտրատեղամասում կամ նրա տարածքում հարձակման են ենթարկվել երեք վստահված անձինք, Արաբկիրում հարձակման է ենթարկվել եւ ուշագնաց է եղել մեկ տեղական դիտորդ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՄԱ-ին հայտնի չի եղել ԸՀ 28-ում (Արմավյան) տեղամասերից բռնի ուժով դուրս հանված վեց անձանց կողմից ներկայացված ոչ մի պաշտոնական բողոք:

ներկայացուցիչների: Տեղամասերի մոտ 3 տոկոսում նկատվել է ոչ լիազորված անձանց միջամտություն ընտրական գործընթացին՝ հիմնականում վստահված անձանց կողմից<sup>76</sup>, ներառյալ քաղաքացիների միջամտությունը քաղաքացիների ընտրության ազատությանը<sup>77</sup>: Չնայած ընտրությունները օրը ընտրատեղամասի շրջակայքում 50 մետրի տարածության վրա խմբերով հավաքվելու իրավական արգելքին, բազմաթիվ ԸՄԴԱ դիտորդներ զեկույցել են, որ ընտրատեղամասերի մուտքի մոտ կամ նրա տարածքում կուտակված են եղել մարդկանց խմբեր: Նրանց ներկայությունը ավելացրել է կուտակումների գոյությանը, եւ երբեմն նրանք լուրջ միջամտություն են ցույց տվել ընտրական գործընթացում<sup>78</sup> կամ ներգրավված են եղել «վերահսկվող քվեարկության» ձևերի մեջ<sup>79</sup>:

Քվեի գաղտնիությունը լիովին պահպանվել է այցելած տեղամասերի 87 տոկոսում եւ հիմնականում պահպանվել է մոտ 10 տոկոսում: Այնուամենայնիվ, 23 տեղամասերում (2 տոկոս) նկատվել է՝ ինչպես են ընտրողներն իրենց նշումով քվեաթերթիկը ցույց տալիս մեկ այլ անձի եւ քվեարկում քվեախցիկից դուրս (13 դեպք)<sup>80</sup>: «Խմբակային քվեարկություն» (միաժամանակ քվեարկացում մեկից ավելի անձի գոյություն) է նկատվել այցելած տեղամասերի 9 տոկոսում: Քվեախցիկների տեղադրումը բարելավվել էր 2007 թվականի համեմատությամբ, սակայն դեռ խնդրահարույց էր այցելած տեղամասերի 7 տոկոսում: Այցելած 25 տեղամասում ԸՄԴԱ դիտորդները տեսել են, թե ինչպես է մեկ կամ մի քանի անձ օժանդակում բազմաթիվ ընտրողների (ըստ երեւույթին նրանց ովքեր օժանդակության կարիք ունեն)՝ չնայած այս գործողության վրա վերջերս մտցված իրավական արգելքին<sup>81</sup>:

Այցելած տեղամասերի գերակշռող մեծամասնությունում ԸՄԴԱ դիտորդները զեկույցել են, որ ընտրողների տեխնիկական սպասարկումն ընթացել է համաձայն ընթացակարգերի՝ ընտրողների անձը հաստատող փաստաթղթերը ստուգվել են, ընտրողները եւ ՏՀ

<sup>76</sup> Օրինակ՝ 04/02 ընտրատեղամասում պարոն Տեր-Պետրոսյանի վստահված անձը ակտիվորեն ստուգել է ընտրողների անձը հաստատող փաստաթղթերը: Թիվ 29/16 եւ 34/19 ընտրատեղամասերում դիտարկվել է ինչպես են վարչապետ Սարգսյանի վստահված անձինք վերահսկում քվեարկության գործընթացը: Պարոն Տեր-Պետրոսյանի վստահված անձը կատարել է ՏՀ անդամի բոլոր գործառնությունները 38/10 տեղամասում՝ հիվանդանոցում: 40/10 տեղամասում ԸՄԴԱ դիտորդները տեսել են, ինչպես է ոստիկանը հրահանգներ տալիս ՏՀ անդամներին եւ օժանդակություն ցույց տալիս որոշ ընտրողներին՝ նրանց «օգնելով» քվեարկել:

<sup>77</sup> Օրինակ՝ 26/29 տեղամասում պարոն Տեր-Պետրոսյանի վստահված անձը խախտել է քվեարկության ժամանակ ընտրողի առանձնությունը, նույնն արել 39/14 եւ 30/11 տեղամասերում վարչապետ Սարգսյանի վստահված անձինք եւ 26/09 տեղամասում՝ տեղական դիտորդը: 12/13 տեղամասում վարչապետ Սարգսյանի վստահված անձը «բազմաթիվ» ընտրողների օժանդակություն է ցույց տվել քվեաթերթիկների նշման գործում:

<sup>78</sup> Օրինակ՝ 07/06 ընտրատեղամասում (Երեւան, Մալաթիա-Մեքաստիա)պարոն Հովհաննիսյանի վստահված անձը ԸՄԴԱ դիտորդներին հաղորդել է, որ իրենց ժամանումից առաջ մոտ 10 անձինք մտել են ընտրատեղամաս, դուրս հանել բոլոր վստահված անձնաց եւ լցունել քվեատուփը: ՏՀ նախագահը ԸՄԴԱ դիտորդներին հաստատել է, որ միջադեպը կայացել է:

<sup>79</sup> Օրինակ՝ ԸՄԴԱ դիտորդները զեկույցել են, որ 12/24 տեղամասում ինչ-որ խումբ ստուգել է, արդյոք ընտրողները «վստահ են, թե ում համար պետք է քվեարկեն»: ԸՄԴԱ դիտորդները նմանօրինակ իրավիճակի մասին են զեկույցել նաեւ 31/30 ընտրատեղամասի վերաբերյալ:

<sup>80</sup> Օրինակ՝ 17/35 տեղամասում ընտրողից պահանջվել է, որ նշումով քվեաթերթիկը ցույց տա գյուղապետին: 38/63 տեղամասում ԸՄԴԱ դիտորդները տեսել են, թե ինչպես են մարդիկ իրենց նշումներով քվեաթերթիկներն ուրիշներին ցույց տալիս, իսկ տեղամասում եղած կուտակումները գաղտնի քվեարկությունը դարձրել էին անհնարին: 1/31 տեղամասում որոշ ընտրողների իրենց նշումներով քվեաթերթիկները ցույց են տվել, իսկ շատերը դրանք չեն դրել ծրարների մեջ՝ նրանց փոխարեն դա արել են ՏՀ անդամները:

<sup>81</sup> For example at PS 13/38, 150 elderly persons were assisted by a few individuals.

անդամները քվեաթերթիկը տալուց ստորագրել են ընտրողների ցուցակում եւ քվեաթերթիկները ստորագրված են եղել ՏՀՀ երեք անդամի կողմից: Ընդհանուր առմամբ, քվեաթերթիկները ծրարները կնքվել են մինչեւ ընտրողների կողմից դրանք նետումը քվեատուփի մեջ եւ ՏՀՀ-ները կնքել են ընտրողների անձը հաստատող փաստաթղթերը (օրենսդրի կողմից բազմակի քվեարկության բացառման համար ընտրված մեխանիզմ):

Այդուհանդերձ, քվեարկության ազատության վերաբերյալ լուրջ խնդիրների շարքում են ընտրողների ընտրության վրա ազդելու փորձերի (18 դեպք)<sup>82</sup> ընտրատեղամասերից դուրս քարոզչության (32 դեպք)<sup>83</sup> եւ «վերահսկվող» քվեարկության տարբեր ձևերի<sup>84</sup> դիտարկված դեպքեր: Քվեարկության արդարությանն առնչվող խնդիրներ նույնպես դիտարկվել են, այդ թվում՝ նախապես նշում ունեցող քվեաթերթիկով քվեարկություն (4 դեպք)<sup>85</sup>, ընտրողի կողմից մեկից ավելի քվեաթերթիկի ստացում կամ նետում քվեատուփը (3 դեպք)<sup>86</sup>, այլ անձի փոխարեն քվեարկություն «վստահված քվեարկություն» (11 դեպք): Բացահայտ ընտրողների փոխարեն քվեարկության<sup>87</sup> կամ բազմակի քվեարկության սխեմաներ<sup>88</sup> են դիտարկվել ընտրությունների օրը: «Լցուման» առանձին դեպք է դիտարկվել թիվ 23/24 ընտրատեղամասում (Սեւան)<sup>89</sup>, իսկ այլ ԸՄԴԱ դիտորդներ վստահելի տեղեկություններ են ստացել, այն մասին, որ լցումաներ են տեղի ունեցել այլ տեղամասերում մինչ նրանց ժամանումը<sup>90</sup>:

<sup>82</sup> Օրինակ՝ 32/58 ընտրատեղամասում վարչապետ Սարգսյանի վստահված անձանցից մեկը ընտրողներին ցուցումներ է տվել, թե նրանք ում ընտրեն: 31/30 եւ 32/42 ընտրատեղամասերում ՏՀՀ անդամները ընտրողին ասել են, որ քվեարկի վարչապետ Սարգսյանի օգտին:

<sup>83</sup> Օրինակ՝ քարոզչական նյութեր կամ Հանրապետական կուսակցության դրոշներ ունեցող մեքենաներ են նկատվել տարբեր տեղամասերի մոտ, եւ երբեմն էլ ընտրողներին ուղեկցել են տեղամաս (օրինակ՝ թիվ 17/04-ում): Քարոզարշավի ավտոբուս է կանգնեցված եղել 17/14 տեղամասի մոտ, իսկ 13/08 տեղամասում դարբասին ցուցադրված են եղել Հանրապետական կուսակցության դրոշներ: Վարչապետ Սարգսյանի քարոզչական պաստառներ են դիտարկվել մի շարք տեղամասերի ներսում եւ դրսում (օրինակ՝ թիվ 12/25):

<sup>84</sup> Օրինակ, թիվ 28/07 ընտրատեղամասում մի անձ է ներկայացել՝ ունենալով 16 անձնագրեր եւ այդուհետու 16 անձանց «օժանդակություն է ցույց տվել» քվեարկության ժամանակ, չնայած, որ ոչինչ չէր վկայում այն բանի մասին, որ այս անձինք քվեաթերթիկի վրա նշան անելու համար օժանդակության կարիք ունենին: Թիվ 12 ԸՀ-ի մի քանի ընտրատեղամասերում վարչապետ Սարգսյանի վստահված անձն ընտրողներին բաժանում էր կարմիր թանաքով գրիչներ: 12/23 ընտրատեղամասում ԸՄԴԱ դիտորդը նկատել է, որ Սերժ Սարգսյանի օգտին քվեաթերթիկի վրա արված նշումները կարմիր թանաքով էին արված:

<sup>85</sup> Օրինակ՝ թիվ 17/35 ընտրատեղամասում դիտորդները դիտարկել են «կարուսելային քվեարկություն», երբ ընտրողը տեղամասից դուրս ստանում է արդեն նշում ունեցող քվեաթերթիկ՝ այն քվեատուփի մեջ զցելու համար, իսկ վերադառնում է լրացված քվեաթերթիկով:

<sup>86</sup> Օրինակ՝ 32/58 տեղամասում ԸՄԴԱ դիտորդը տեսել է, թե ինչպես է ընտրողը ներկայացնում երկու անձնագիր եւ ստանում երկու քվեաթերթիկ:

<sup>87</sup> Օրինակ՝ 1/16 տեղամասում փակումից 10 րոպե առաջ եկել են երկու ընտրողներ, եւ պարզվել է, որ նրանց փոխարեն արդեն քվեարկել են: Նմանօրինակ միջադեպեր են նկատվել 1/07, 05/06, 6/20, 09/13, 12/07, 12/23 եւ 31/11 տեղամասերում: Թիվ 14/51 տեղամասում դիտորդները տեսել են, թե ինչպես է ՏՀՀ անդամը պահում որոշ ընտրողների անձնագրերն, այն բանից հետո, երբ նրանք արդեն քվեարկել էին:

<sup>88</sup> Օրինակ՝ 35/28 տեղամասի մոտ ավտոբուսի վարորդի ձեռքին եղել են բազմաթիվ անձնագրեր, երբ նրան են մոտեցել դիտորդները, նա հեռացել է: 34/24 տեղամասում դիտորդները զեկույցել են արդեն կնքված անձնագրով քվեարկության փորձերի մասին (ինչը նշանակում է, որ ընտրողն արդեն քվեարկել է):

<sup>89</sup> Թեկնածուի վստահված անձը մոտ 15 քվեաթերթիկ նետեց քվեատուփի մեջ, այն բանից հետո, երբ ՏՀՀ անդամը դրանք կնքեց:

<sup>90</sup> Օրինակ՝ զեկույցներ են ստացվել այս օրը հերթապահ մարդկանցից (վստահված անձինք կամ ՏՀՀ անդամներ) թիվ 07/06, 07/20, 08/21, 11/10 եւ 17/08 ընտրատեղամասերի վերաբերյալ: Որոշ դեպքերում այդ զեկույցները հաստատվել են այլ վկաների կողմից: Ընտրությունների օրվա ընթացքում ինտերնետային լրատվամիջոցներ հաղորդել են քվեատուփերի լցուման մոտ 18 դեպքի մասին:

Որոշ ԸՄԴԱ դիտորդներ զեկույցել են ընտրատեղամասերի տարածքում հանդիպած ընտրողներով ավտոբուսների մասին<sup>91</sup>, եւ լայնատարած շրջանառվող ասեկոսները ընտրողների համար կազմակերպված տեղափոխումը կապում էին քվեների գնման սխեմայի հետ: Երբ ԸՄԴԱ դիտորդները փորձել են ճշտել վարորդներից եւ ուղեւորներից, հիմնականում ստացել են խուսափող պատասխաններ: Ընտրողներով լի ավտոբուսների ժամանումը առաջացրել է կուտակումների հետ կապված խնդիրներ, իսկ երբեմն էլ լարված մթնոլորտ:

Շենգավիթում գտնվող ընտրատեղամասի տարաշքում ԸՄԴԱ դիտորդները տեսել են, թե ինչպես են ընտրողները գումար վերցնում մի մարդուց, ով նշումներ է անում անուններով ցուցակում: ԸՄԴԱ դիտորդները երեք առանձին վստահելի զեկույցներ են ստացել անձնացից, ովքեր անձամբ վկա են եղել քվեների գնման թիվ 23/09, 29/36 եւ 34/23 ընտրատեղամասերի տարածքում: Թիվ 35/19 ՏՀՀ անդամ տեղեկացրել է ԸՄԴԱ դիտորդներին, որ ընտրողներն իրեն բողոքել են ընտրատեղամասից դուրս տեղի ունեցող քվեների գնման մասին<sup>92</sup> եւ որ ինքը տեսագրել է գործարքները: Էրեբունիի մեկ ընտրատեղամասում ՏՀՀ անդամը հայտնել է ԸՄԴԱ դիտորդներին, որ իրեն փող են առաջարկել քվեների հաշվարկի գործընթացին ներկա չլինելու համար:

ԸՄԴԱ դիտորդների այցելած տեղամասերից միայն 24-ում են գրանցվել պաշտոնական բողոքներ: Այնուամենայնից, որոշ ԸՄԴԱ դիտորդներ զեկույցել են, որ ՏՀՀ նախագահները չեն ցանկացել գրանցել պաշտոնական բողոքներ<sup>93</sup>:

## Բ. ՀԱՇՎԱՐԿ

ԸՄԴԱ դիտորդները հետեւել են հաշվարկին 111 ընտրատեղամասերում: Քվեների հաշվարկի ընթացքը գնահատվել է որպես «վատ» կամ «շատ վատ» այցելած տեղամասերի մոտ 16 տոկոսում:

Քվեատուփերի բացմանը նախորդող սահմանված ընթակառուցվածքը հիմնականում պահպանվել են<sup>94</sup>, թեեւ այցելած ընտրատեղամասերի 8 տոկոսում տվյալները գրանցված չէին մատչանում, իսկ որոշ դեպքերում ՏՀՀ-ներն այնուհետեւ փոփոխել են այս տվյալները: ԸՄԴԱ դիտորդների մոտ 17 տոկոսը զեկույցել են նշանակալի ընթացակարգային

<sup>91</sup> Օրինակ՝ ավտոբուսներ եւ միկրոավտոբուսներ են նկատվել 02/18, 04/02, 11/31, 11/32, 12/24, 17/28, 17/29, 26/09, 29/36, 34/03, 34/23, 35/18, 35/19 եւ 35/28 տեղամասերի մոտ: Դիտորդները տեսել են, ինչպես միկրոավտոբուսները Երեւանյան շուկաներից մեկի մոտից հավաքել են իրենց ձեռքներին անձնագիր ունեցող անձանց խմբերի, եւ դատարկ ավտոբուսների մեծ քանակ են տեսել Հանրապետական կուսակցության Մալաթիա-Սեբաստիայի եւ Գյումրիի գրասենյակների մոտ: Դիտորդները նկատել են, որ ԸՀՀ 1-ում (Ավան, Երեւան) ընտրողներին տեղամասեր տեղափոխելու համար մատչելի է եղել անվճար տաքսի ծառայություն:

<sup>92</sup> Այս մասին նույնպես ԸՄԴԱ դիտորդներին հայտնել են 31/30 եւ 35/18 տեղամասերի վստահված անձինք:

<sup>93</sup> Այս մասին ԸՄԴԱ դիտորդները զեկույցել են, օրինակ՝ 1/16, 05/11, 07/20, 12/07, 13/30, 13/38, 18/30 եւ 31/27 ընտրատեղամասերի վերաբերյալ: Ընտրություններից հետո Տեր-Պետրոսյանի վստահված անձը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՄԴԱ-ին ցույց է տվել ընտրությունների օրը ՏՀՀ-ների կողմից ըստ նրա չընդունված ավելի քան 200 դիմում: Տեր-Պետրոսյանի վստահված անձանցից մեկը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՄԴԱ-ին հատնել է, որ շաբաթ օրը, փետրվարի 23-ին, ԿՀՀ քարտուղարը մերժել է բողոքի 122 արձանագրության ընդունումը (որոնք ՏՀՀ-ները նույնպես հրաժարվել գրանցել):

<sup>94</sup> Օրինակ՝ այցելած ընտրատեղամասերի 97 տոկոսում հաշվարկը եւ չօգտագործված քվեաթերթիկների մարումը, չօգտագործված քվեաթերթիկների անվտանգության ապահովումը (98 տոկոսում), քվեաթերթիկ ստացած ընտրողների թվի հաշվարկը (98 տոկոսում) եւ ընտրացուցակների անվտանգության ապահովումը (95 տոկոսում):

սխալների մասին, հիմնականում քվեատուփերի բացումից հետո: Օրինակ, այցելած ընտրատեղամասերի 21 տոկոսում չի հայտարարվել ամեն թեկնածուի օգտին եղած քվեների քանակը, իսկ 10 տոկոսում ոչ հետետղական մոտեցում է ցուցաբերվել վավեր քվեների որոշման հարցում<sup>95</sup>: Այլ խնդիրների թվում էին նշված քվեաթերթիկները ներկաներին ցույց չտալը, քվեների այլ թեկնածուի քվեների տրցակի վրա դնելը, նախքան հաշվարկի ավարտը արձանագրությունների ստորագրումը, դատարկ արձանագրությունների ստորագրումը, քվեատուփերի լցուման նշաններ եւ ԸՄԴԱ դիտորդներին խոչընդոտելու փորձեր<sup>96</sup>: Որոշ ԸՄԴԱ դիտորդներ զեկույցել են, որ ՏՀՀ նախագահները անընդհատ հեռախոսագանգեր են ստացել արդյունքների՝ հատկապես վարչապետ Սարգսյանի օգտին քվեների մասին զեկույցելու խնդրանքներով<sup>97</sup>: Տեղական դիտորդներին կամ վստահված անձանց այցելած տեղամասերի մոտ 10 տոկոսում հաշվարկի ժամանակ պարզ տեսադաշտ չի տրվել:

ՏՀՀ-ների մոտ 15 տոկոսը դժվարություններ է ունեցել արդյունքների արձանագրությունները լրացնելու գործում, չնայած հավելյալ ուսուցման: 8 ընտրատեղամասերում ԸՄԴԱ դիտորդները տեսել են տվյալների մտադրված կեղծում<sup>98</sup>, մի քանի ընտրատեղամասերում արձանագրությունները թանաքով չէին լրացված, 30 տոկոսում արձանագրությունները չեն հրապարակվել (ինչպես պահանջվում է օրենքով), իսկ 6 տոկոսում արձանագրության պատճեն չի տրվել բոլոր այն անձանց, ովքեր խնդրել են այն:

#### Գ. ԱՄՓՈՓՈՒՄ ԵՒ ՆԱԽԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ

ԸՄԴԱ-ն դիտարկել է արդյունքների ամփոփման գործընթացը բոլոր 41 ԸՀՀ-ներում՝ լրացնելով 85 դիտորդական ձեռնարկ: Արդյունքների ամփոփման գործընթացը 5 ՏՀՀ-ներում գնահատվել է որպես բացասական, իսկ զեկույցների 7 տոկոսում գնահատվել է թափանցիկության պակաս: Ձեկույցված թերությունների շարքում էին ՏՀՀ-ներից չկնքված փաթեթներով նյութերի ստացման<sup>99</sup>, ԸՀՀ-ներից ընտրական նյութեր ունեցող ՏՀՀ

<sup>95</sup> Օրինակ՝ 4/18 ընտրատեղամասում, որտեղ գրեթե միանման «V» նշանով քվեաթերթիկների նկատմամբ տարբեր վերաբերմունք է դրսևորվել, եւ որոշները սխալ կերպ անվավեր հայտարարվել: 10/24 ընտրատեղամասում դիտորդները զեկույցել են, որ անվավեր քվեաթերթիկների մասին կանոնները տարբեր թեկնածուների վերաբերյալ տարբեր կերպ են կիրառվել:

<sup>96</sup> Օրինակ՝ 22/15 ընտրատեղամասում ԸՄԴԱ դիտորդները զեկույցել են, որ ՏՀՀ անդամներին ստիպել են այլ թեկնածուների օգտին քվեարկված քվեաթերթիկներից ավելացնել վարչապետ Սարգսյանի օգտին: 13/18 տեղամասում նախագահը նշված քվեաթերթիկները ցույց չի տվել, ՏՀՀ անդամները քվեաթերթիկները հաշվել են՝ ձեռքներին գրիչներ ունենալով, քվեաթերթիկները դրվել են այլ թեկնածուի քվեաթերթիկների տրցակի վրա, իսկ արձանագրությունները ստորագրվել են մինչ հաշվարկի ավարտը: ՏՀՀ անդամների կողմից չլրացված արձանագրություն է ստորագրվել 11/32 ընտրատեղամասում: Թիվ 32/58 ընտրատեղամասում փորձեր են արվել ԸՄԴԱ դիտորդներին խոչընդոտել տեսնել քվեաթերթիկների վրայի նշումները: Այնուամենայնիվ, նրանք նկատել են, որ պարոն Տեր-Պետրոսյանի օգտին նշված քվեաթերթիկներ են դրվել պարոն Սարգսյանի տրցակում, իսկ երկու դեպքում տեսել են, թե ինչպես են քվեատուփից հանվում «իրար հետ դասավորած» ծրագրերի կապեր: Այդ բոլոր քվեաթերթիկները նշված էին պարոն Սարգսյանի օգտին: Արդյունքների արձանագրությունը ստորագրված չէր եւ ոչ լիազորված անձինք այն ուղեկցել էին ԸՀՀ:

<sup>97</sup> Օրինակ՝ 25/04 ընտրատեղամասում նախագահին վեց անգամ զանգահարել են արդյունքների վերաբերյալ զեկույցներ ստանալու համար:

<sup>98</sup> Օրինակ՝ 17/01 ընտրատեղամասում ԸՄԴԱ դիտորդները տեսել են, թե ինչպես է ՏՀՀ անդամը ստորագրություններ ավելացնում ընտրողների անունների դիմաց:

<sup>99</sup> Օրինակ՝ 11, 22, 29, 30 եւ 38 ԸՀՀ-ների որոշ ընտրատեղամասեր:



անդամների հեռացման<sup>100</sup>, վստահված անձանց ԸԸՀ գործառույթների կատարման թույլատվության<sup>101</sup>, ՏԸՀ վստահված անձանց կողմից բողոքների չընդունման<sup>102</sup> եւ ԸՄԴԱ դիտորդներին արձանագրությունների գնումը թույլ չտալու<sup>103</sup> դեպքեր: Այնուամենայնիվ, գործընթացի կազմակերպմանն առնչվող խնդիրներ են նկատվել որոշ դեպքերում: Թվում էր, թե շփոթմունք կար Երեւանի ԸԸՀ-ներում (ԸԸՀ-ներ 1-13) ՏԸՀ արձանագրությունների ամփոփման գործընթացի վերաբերյալ: Սա բարդացվում էր նրանով, որ խնդրի վերաբերյալ չկար ԿԸՀ ցուցում: Օրինակ՝ թիվ 2 ԸԸՀ-ից 35 ՏԸՀ արձանագրություններ ԿԸՀ են հասել առանց ԸԸՀ ակնարկների եւ կնիքի: 13 ԸԸՀ-ներում ԸՄԴԱ դիտորդները չեն կարողացել տեսնել, թե ինչպես են արդյունքները մուտքագրվում համակարգչային համակարգի մեջ<sup>104</sup>: Ի հավելումս, ԸՄԴԱ դիտորդները երբեմն զեկուցել են արդյունքների ամփոփման անճշտությունների մասին<sup>105</sup>:

ՏԸՀ արձանագրություններում չհամընկնող թվերի վերաբերյալ ԸԸՀ պատասխաններում միանման մոտեցում չկար: Մովորաբար, ԸԸՀ-ներն արձանագրությունում փոփոխություն են կատարել<sup>106</sup>, բայց երբեմն էլ նրանք ՏԸՀ-ներին հետ են ուղարկել փոփոխություններն անելու համար (օրինակ թիվ 22 եւ 27 ԸԸՀ-ներ) կամ ոչինչ չեն ձեռնարկել (օրինակ թիվ 26 ԸԸՀ): Շփոթմունք կար Երեւանում, որտեղ ԸԸՀ-ները պետք է ՏԸՀ արձանագրություններն ուղարկեին ԿԸՀ՝ մարզերի ԸԸՀ-ների համար մշակված արդյունքների համակարգի մեջ ներմուծելու փոխարեն: Սա բարդացվում էր նրանով, որ խնդրի վերաբերյալ չկար ԿԸՀ ցուցում:

Ընտրությունների գիշերը ԿԸՀ-ն իր կայքում հրապարակեց քվեարկության արդյունքների տվյալների մի մասը: Փետրվարի 20-ի առավոտյան ԿԸՀ ութ անդամներից վեցը ստորագրեցին նախնական արդյունքների արձանագրությունը<sup>107</sup>: Համաձայն նախնական արդյունքների վարչապետ Սարգսյանն ուներ քվեների մոտ 52.8 տոկոսը. այդպիսով խուսափելով ընտրությունների երկրորդ փուլից:

<sup>100</sup> Օրինակ՝ թիվ 22/20 եւ 22/22 ՏԸՀ-ները մինչ ԸԸՀ ժամանելը անհետացել են մի քանի ժամով: Երբ թիվ 22/20 ՏԸՀ-ն վերադարձավ, դիտորդին պարզ դարձավ, որ ընտրական նոյթեր պարոնակող փաթեթը բացվել էր:

<sup>101</sup> Օրինակ՝ թիվ 13 ԸԸՀ-ում ԸՄԴԱ դիտորդները զեկուցել են, որ վարչապետ Սարգսյանի վստահված անձը վերցնում եւ ստուգում էր արձանագրությունները, հետո դրանք փոխանցում ԸԸՀ նախագահին, ինչը ԸԸՀ անդամների պարտականությունն էր:

<sup>102</sup> Օրինակ՝ թիվ 5 ԸԸՀ:

<sup>103</sup> Օրինակ՝ թիվ 32 ԸԸՀ-ում ԸՄԴԱ դիտորդներին ԸԸՀ նախագահը չի թույլ տվել տեսնել 25 ՏԸՀ արձանագրություններ:

<sup>104</sup> Օրինակ՝ թիվ 38 ԸԸՀ-ում ԸՄԴԱ դիտորդներին թույլ չեն տվել մտնել համակարգչային սենյակ:

<sup>105</sup> Օրինակ՝ թիվ 14 ԸԸՀ-ում պարոն Տեր-Պետրոսյանի վստահված անձը վերահաշվարկ է պահանջել, այն բանից հետո, երբ 14/32 ՏԸՀ նախագահը ՏԸՀ անդամների կողմից ստորագրված երկու ճլրացված արձանագրություն է հանել: 22/30 ՏԸՀ-ն բերել էր ՏԸՀ արձանագրության միայն մեկ օրինակ: Նախագահին հետ են ուղարկել մյուս օրինակները բերելու համար: Երբ ՏԸՀ նախագահը վերադարձել է պակասող արձանագրությունների հետ, առաջին արձանագրությունը մերժվել է եւ ընդունվել են պակասողները: Նկատելի տարբերությունների թվում էին՝ 260 քվե պարոն Հովհաննիսյանի օգտին նախկին 10-ի փոխարեն եւ 602 քվե վարչապետ Սարգսյանի օգտին՝ նախկին 902-ի փոխարեն:

<sup>106</sup> Օրինակ՝ թիվ 1 ԸԸՀ-ում նոր արձանագրություն է կազմվել ՏԸՀ 01/19-ի համար, որտեղ նախկին 634-ի փոխարեն չօգտագործված քվեաթերթիկների թիվը 459 էր:

<sup>107</sup> Օրինակ երկիր եւ Ժառանգություն կուսակցությունների կողմից առաջադրված անդամները ներկա չէին: Դաշնակցության կողմից առաջադրված անդամը ստորագրել է արձանագրությունը հատուկ կարծիքով թիվ 7, 8, 13 եւ 17 ԸԸՀ-ներում լուրջ ընտրանախտումների վերաբերյալ:

## XV. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ

### Ա. ՏԸՀ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ

Օրենսգրքի համաձայն թեկնածուները եւ ՏԸՀ-ներում գրանցված վստահված անձինք կարող են տվյալ ՏԸՀ արդյունքների վերահաշվարկի դիմում ներկայացնել ԸՀ՝ մինչ ընտրությունների հաջորդ օրվա (փետրվարի 20) ժամը 14:00-ը: ԸՀ-ները վերահաշվարկ են իրականացրել մինչեւ օրենքով սահմանված վերջնաժամկետը (փետրվարի 24-ի ժամը 14:00-ը):

Համաձայն ԿԸՀ-ի վերահաշվարկի դիմումներ են ստացվել 25 ԸՀ-ներում՝ 159 ՏԸՀ արդյունքների վերաբերյալ: Մնացած դիմումները ԸՀ-ները մերժել են այն հիմնավորմամբ, որ վերահաշվարկ պահանջելու վերջնաժամկետն արդեն անցել է, իսկ 34 դիմում մերժվել է առանց հիմնավոր պատճառի՝ դրանց համարելով «անհիմն»: ԿԸՀ-ում գրանցվել են մի քանի բողոքներ, համաձայն որոնց ԸՀ-ները ներկա չեն եղել վերահաշվարկի դիմումներ ընդունելու համար կամ խոչընդոտել են վերահաշվարկի դիմումների ընդունման գործընթացին<sup>108</sup>:

Ըստ ԿԸՀ-ի պարոն Հարությունյանը կամ նրա վստահված անձինք դիմել են 27 վերահաշվարկ կատարելու դիմումով, հիմնականում թիվ 1, 4, 8 եւ 13 ԸՀ-ներում (Երեւանում): Այս դիմումների մի մասը գրանցվել են փետրվարի 20-ի ժամը 00:00-ից քիչ անց, այդ թվում նաեւ առնվազն մեկ դեպքում նույնիսկ այն ՏԸՀ-ի արդյունքները վիճարկելու համար, որում դեռ հաշվարկ էր իրականացվում<sup>109</sup>: Մյուս թեկնածուները վերահաշվարկ պահանջել են պարոն Հարությունյանի դիմումներից հետո: Քանի որ ԸՀ-ները ՏԸՀ արդյունքների վերահաշվարկն իրականացրել են դիմումների գրանցման հերթականության համաձայն, որոշները չեն կատարել այլ թեկնածուների կողմից պահանջած վերահաշվարկը, քանզի զբաղված են եղել պարոն Հարությունյանի պահանջով իրականացվող վերահաշվարկով<sup>110</sup>:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ դիտորդները հետեւել են վերահաշվարկի գործընթացին բոլոր ԸՀ-ներում, որտեղ այն իրականացվել է, չնայած չեն դիտարկել բոլոր ՏԸՀ-ների վերահաշվարկները: Դիտարկված վերահաշվարկների մեծամասնությունը ի հայտ են բերել, որ առաջնային հաշվարկում կային անհամապատասխանություններ եւ սխալներ, որոնց մի մասը նշանակալի էր, կամ վերահաշվարկի ժամանակ առաջացած այլ լուրջ խնդիրներ: Սա կասկածի տակ էր դնում ՏԸՀ-ների եւ ԸՀ-ների ազնվության եւ քաղաքական անկողմնակալության հարցը:

<sup>108</sup> Օրինակ, բողոքներ են ներկայացվել թիվ 32 ԸՀ, որը մերժել է վերահաշվարկ կատարել թիվ 32/20, 32/30 եւ 32/46 ՏԸՀ-ներում՝ պատճառաբանելով, որ անցել է վերջնաժամկետը, մինչդեռ բողոքատուները պնդում են, որ ԸՀ-ում են եղել ժամը 13:30-ին: Թիվ 8 ԸՀ-ում թիվ 8/6, 8/16, 8/17, 8/21, 8/23 եւ 8/24 ՏԸՀ-ների վերահաշվարկի դիմումները ներկայացվել են մինչեւ ժամը 14:00-ն, բայց ԸՀ-ն մինչեւ 14:00-ն մերժել է դիմումների գրանցումը: Այլ դիմումներ են մերժվել թիվ 3, 21, 23, 24 եւ 38 ԸՀ-ներում:

<sup>109</sup> Թիվ 4/18 ՏԸՀ-ում քվեների հաշվարկի ժամանակ ներկա գտնվող ԸԴԱ դիտորդները զեկույցել են, որ հաշվարկն ավարտվել է ժամը 03.10-ին և քվեների հաշվարկի ժամանակ ընտրատեղամասում թեկնածուի վստահված անձը ներկա չի եղել:

<sup>110</sup> Օրինակ՝ թիվ 1 ԸՀ-ում Պարոն Բաղդասարյանի պահանջած 2 վերահաշվարկ չի իրականացվել: Թիվ 4 ԸՀ-ն վերահաշվարկի համար հատկացված ժամկետում իրականացրել է 12 դիմումից միայն 7-ի վերահաշվարկը, եւ պարոն Տեր-Պետրոսյանի կողմից պահանջված 3 վերահաշվարկի դիմումից կատարվել է երկուսը:

Թիվ 5 ԸԸՀ-ն (Դավիթաշեն, Երևան), օրինակ, հետաձգել է թիվ 5/21 ՏԸՀ վերահաշվարկը: Մինչ վերահաշվարկի սկիզբը անհայտ անձինք մտել են ԸԸՀ տարածք եւ ստիպել անդամներին թեկնածուների վստահված անձանց, լրագրողների եւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդի հեռանալ շենքից, մինչ ոստիկանները պասսիվ հետեւել են կատարվողին: Թիվ 13 ԸԸՀ-ից (Էրեբունի, Երևան) թիվ 13/10 ՏԸՀ արդյունքների վերահաշվարկի ժամանակ անհետացել է պարոն Տեր-Պետրոսյանի օգտին քվեարկված թերթիկներով ծրարը: Թիվ 4/03 ՏԸՀ (Արաբկիր, Երևան) արդյունքների վերահաշվարկի ժամանակ ԸԸՀ-ն հանել է 34 քվեաթերթիկ, որոնց վրա նշումներ կային երկու թեկնածուի օգտին (թե՛ պարոն Տեր-Պետրոսյանի, թե՛ պարոն Սարգսյանի), քվեաթերթիկների այն տրցակից, որ նախկինում հաշվարկվել էին որպես պարոն Տեր-Պետրոսյանի օգտին: Այլ թերությունների թվում էին քվեաթերթիկների ոչ անհրաժեշտ դասումը որպես անվավեր<sup>111</sup>, ինչպես նաև քվեաթերթիկների վրա կատարված նշումների կամ նրանց վավեր լինելու ուսումնասիրության չկատարումը<sup>112</sup>:

Վերահաշվարկի իրականացման վերջնաժամկետի սպառման պահին 24 ՏԸՀ-ների վերահաշվարկ դեռ կատարված չէր<sup>113</sup>: Չնայած այն բանին, որ օրենսդրությունը նախատեսում է է, որ ԸԸՀ-ները կարող են երկարացնել իրենց աշխատանքային ժամերը, այնուամենայնիվ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն չունի տեղեկատվություն, որեւէ ԸԸՀ-ի վերաբերյալ, որ այդպես է վարվել աշխատանքն ավարտելու համար:

Գլխավոր դատախազը երկու քրեական գործ է հարուցել թիվ 5 եւ թիվ 13 ԸԸՀ-ներում կատարված դեպքերի վերաբերյալ: Փետրվարի 27-ին ԿԸՀ հայտնել է, որ եւս 23 գործ է փոխանցվել դատախազին: Ապրիլին թիվ 13 ԸԸՀ-ի նախագահը կեղծարարություն կատարելու համար դատապարտվել է երկու տարի ազատազրկման: Մտահոգության առիթ է տալիս այն փաստը, որ ԿԸՀ անդամը (Ժառանգություն կուսակցության կողմից առաջադրված) առանց ԿԸՀ համաձայնության կարող էր քրեական հետապնդման մեջ գտնվել թիվ 5 ԸԸՀ-ում ընտրական նյութերի բացման համար, մինչդեռ ոչ մի գործողություն դեռ չէր ձեռնարկվել թիվ 5/21 ՏԸՀ արդյունքների վերահաշվարկը հետաձգող ԸԸՀ անդամների դեմ: Ավելին, ոչ մի գործողություն չի ձեռնարկվել կարգի պահպանման փորձ չանող ոստիկանների դեմ եւ չեն եղել ձերբակալություններ ԸԸՀ տարածք ներխուժած անձանց՝ գործընթացին կարծես թե ոչ լեզվիտիմ միջամտության առնչությամբ:

## Բ. ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Փետրվարի 24-ին ԿԸՀ-ն արտակարգ նիստում հայտարարեց ընտրությունների վերջնական արդյունքները<sup>114</sup>: Վերջնական արդյունքների մասին ԿԸՀ արձանագրությունը ստորագրվել է ԿԸՀ ութ անդամներից վեցի կողմից<sup>115</sup>:

<sup>111</sup> Օրինակ՝ թիվ 34/26 ՏԸՀ-ում (Գյումրի):

<sup>112</sup> Օրինակ՝ թիվ 7/20 ՏԸՀ-ում (Մալաթիա Մեքաստիա, Երևան):

<sup>113</sup> Օրինակ՝ վերահաշվարկի քառօրյա ժամանակահատվածում թիվ 4 ԸԸՀ կատարել է վերահաշվարկի 12 պահանջից 7-ը: Թիվ 34/04, 34/07 եւ 34/30 ՏԸՀ վերահաշվարկը չի իրականացվել: Գրանցվել է բողոք, որ թիվ 35 ԸԸՀ նախագահը վերահաշվարկ չի կատարել, քանզի ներկա են եղել միայն ԸԸՀ 5 անդամներ՝ չնայած քվորումի ապահովման իրավական պահանջ չկա: ԿԸՀ-ն պատասխանել է, որ բողոքները պետք է ներկայացնել Վարչական դատարան:

<sup>114</sup> Այս նիստը կայացել է վերահաշվարկ կատարելու վերջնաժամկետը լրանալուց չորս ժամ հետո, բայց մինչեւ ՏԸՀ արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ ԸԸՀ որոշումների բողոքարկման վերջնաժամկետը: Վարչական դատավարությունների օրենսգրքի համաձայն, ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը կամ անգործությունը կարելի է բողոքարկել եռօրյա

Ընտրողների մասնակցության թիվը ամենացածրն էր թիվ 35 ԸԸՀ-ում (61.45 տոկոս) եւ ամենաբարձրն էր թիվ 28 ԸԸՀ-ում (84.29 տոկոս): Որոշ ՏԸՀ-ներում մասնակցությունը եղել է արտասովոր բարձր: 1,670 ընտրատեղամասերից, որոնք ունեն 300 եւ ավելի գրանցված ընտրողներ, 95-ում մասնակցությունը գերազանցել է 90 տոկոսը, եւ դրանց շարքում 44-ում մասնակցությունը եղել է ավելի քան 95 տոկոս՝ սրանք կենտրոնացված են եղել հատուկ շրջաններում<sup>116</sup>:

Անհավանական բարձր մասնակցություն է նկատվել որոշ ընտրատեղամասերում. օրինակ՝ թիվ 8/23 ՏԸՀ-ում, որտեղ մինչ ընտրության օրը գրանցված են եղել 1,780 ընտրող, մասնակցել են 1,772 ընտրող (99.83 տոկոս) եւ թիվ 37/22 ՏԸՀ-ում, որտեղ մինչ ընտրության օրը գրանցված են եղել 838 ընտրող, մասնակցել են 841 ընտրող (100.36 տոկոս): Համաձայն իշխանությունների նման բարձր մասնակցությունը կարելի է բացատրել զինվորականների քվեարկությամբ:

ՏԸՀ պաշտոնական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ՏԸՀ-ներում, որոնցում մասնակցությունը միջինից բարձր է եղել, նաեւ վարչապետ Սարգսյանի օգտին քվեների տոկոսն է եղել ավելի բարձր: Նույնիսկ հաշվի առնելով Սերժ Սարգսյանի սերտ ընտանեկան կապերը Գորիսի շրջանում (թիվ 37 ԸԸՀ), չորս ՏԸՀ-ների արդյունքները ապշեցուցիչ են, այն պատճառով, որ այդտեղ նա ստացել է քվեների ավելի քան 99 տոկոսը, ընտրողների մասնակցությունը եղել է 97-99.5 տոկոս:

Ըստ ԿԸՀ արդյունքների արձանագրության եղել է 35, 798 անվավեր քվեաթերթիկ (մոտ 2 տոկոս): Այդուհանդերձ, անվավեր քվեաթերթիկների թվի մեջ տարբերություն կար. 5.81 տոկոս թիվ 3 ԸԸՀ-ում եւ 0.88 տոկոս թիվ 23 ԸԸՀ-ում: Թիվ 3 ԸԸՀ-ում որոշ ՏԸՀ-ների կողմից քվեաթերթիկների անվավեր ճանաչումը մտահոգության տեղիք է տալիս, օրինակ՝ թիվ 3/13 ՏԸՀ-ում 1,225 քվեաթերթիկների մոտ 28 տոկոսը (345 քվե) անվավեր էին: Այս տարածքի մյուս չորս ՏԸՀ-ներում անվավեր քվեաթերթիկները թիվը 10 տոկոսից ավելին էր<sup>117</sup>:

ՏԸՀ տվյալների այլ անումալիաների թվում են որոշ դեպքեր, երբ քվեատուփում եղած քվեաթերթիկների թիվը շատ ավելի կամ պակաս է եղել ընտրողներին տրված քվեաթերթիկների թվից<sup>118</sup>:

#### Գ. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՒ ԲՈՂՈՔՆԵՐ

Ընդհանուր առմամբ, ԿԸՀ կողմից դիմումների եւ բողոքների քննումը չի եղել թափանցիկ, բողոքատուներին չի տրամադրվել պաշտպանության արդյունավետ միջոց, եւ մտահոգության տեղիք է տալիս նրա կողմից Ընտրական օրենսգրքի 32(1) հոդվածում ամրագրված՝ քաղաքացիների ընտրական իրավունքի պաշտպանության եւ ընտրական

ժամկետում: Հետեւապես, փետրվարի 24-ին կատարված վերահաշվարկի վերաբերյալ բողոքարկումները կարող էին արվել մինչեւ փետրվարի 27-ը:

<sup>115</sup> Օրինաց երկիր եւ ժառանգություն կուսակցությունների կողմից առաջադրված ԿԸՀ անդամները չեն ստորագրել արձանագրությունը:

<sup>116</sup> Մալաթիա-Մեքասսիա (թիվ 7 եւ 8 ԸԸՀ), Էրեբունի (ԸԸՀ 13), Արտաշատ (ԸԸՀ 17), Մեծամոր (ԸԸՀ 20), Մեան (ԸԸՀ 23), Մարտունի (ԸԸՀ 24), Աբովյան (ԸԸՀ 28), Գորիս (ԸԸՀ 37) եւ Ղափան (ԸԸՀ 38):

<sup>117</sup> Թիվ 3/06 (10.3%), 3/10 (24%), 3/19 (20.5%), 3/20 (19.7%) ՏԸՀ-ներում:

<sup>118</sup> Օրինակ թիվ 7/21 ընտրատեղամասում քվեների թիվը 80-ով գերազանցում էր հատկացված քվեաթերթիկների թվին, իսկ թիվ 9/21 ընտրատեղամասում հատկացված քվեաթերթիկների թիվը 61-ով գերազանցել է քվեների թվին:

գործընթացի իրավական արդարությունն ապահովելու<sup>119</sup> պարտավորության իրագործման վերաբերյալ:

Հետընտրական շրջանում ԿՀՀ ստացել է 19 բողոք, որոնցից շատերը լուրջ անկանոնությունների էին վերաբերում: Օրինակ, պարոն Բաղդասարյանի վստահված անձը տրամադրել է դեպքերի մանրամասներ, երբ ՏՀՀ անդամներին ստիպել են լքել մի քանի ընտրատեղամասեր, եւ պնդում էր, որ նրանց բացակայությամբ տեղի է ունեցել քվեաթերթիկների լցում<sup>120</sup>: Բողոքները չեն քննվել բաց նիստի ժամանակ եւ մերժվել են: ԿՀՀ-ի գրավոր «պատասխանները» բողոքներին առնչվող միակ հանրամատչելի փաստաթղթերն են, եւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՌԱ-ն տեղեկություններ չունի ԿՀՀ-ի կողմից ստացված բողոքների հիմքերի վերաբերյալ արված որեւէ իմաստալի քննության մասին<sup>121</sup>:

ԿՀՀ-ի եւ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ստացված մի քանի դիմումներ ուղարկվել են Գլխավոր դատախազություն: Գրելու պահին սկսվել էին ընտրություններին առնչվող 38 քրեական հետաքննություններ, որոնց մի մասը վերաբերում են ընտրությունների օրը կատարված դեպքերին ինչպես օրինակ ֆիզիկական հարձակումներ<sup>122</sup>, հանձնաժողովի անդամների աշխատանքների խոչընդոտում եւ ընտրությունների արդյունքների կեղծում<sup>123</sup>:

Ընտրական օրենսգիրքը պարունակում է դրույթներ, որոնցով ԿՀՀ-ն եւՎարչական դատարանը իրավասություն են ստանում ՏՀՀ արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ ԸՀՀ որոշումների մասին բողոքներ քննել<sup>124</sup>: Թեկնածուների վստահված անձինք եւ ՏՀՀ անդամները բողոքներ եւ դիմումներ են ներկայացրել ԿՀՀ վերահաշվարկի պահանջի

<sup>119</sup> Ի հավելումն, 1990 թվականի Կոպենհագենի փաստաթղթի 5.10 կետի համաձայն մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել, որ «յուրաքանչյուրն ունենա վարչական որոշումներից պաշտպանության արդյունավետ միջոցներ, որպեսզի ապահովվի հարգանքը հիմնարար իրավունքների հանդեպ եւ իրավական արժանապատվությունը»:

<sup>120</sup> Թիվ 7/05, 7/25, 8/17, 11/6, 13/1, 17/1, 17/2, 17/3, 28/7 եւ 28/26 ընտրատեղամասեր: ԿՀՀ պաշտոնական պատասխանում ասվում է ուղղակի, որ «Ձեր դիմումում վերված փաստերը կեղծ են: Նշված փաստերը ստուգվել են համապատասխան հանձնաժողովներում»: ԿՀՀ-ն կցել է ԸՀՀ եւ ՏՀՀ նախագահների նամակներ, որտեղ նրանք հերքում են որեւէ խնդրահարույց խնդրի գոյությունը: Այս տեղամասերից ոմանց արդյունքներն տարօրինակ են եղել, օրինակ թիվ 28/26-ում, որտեղ գրանցված են 1,961 ընտրող, մասնակցությունը եղել է ավելի քան 89 տոկոս, եւ վարչապետ Մարգարյանը ստացել է քվեների 95 տոկոսից ավելին:

<sup>121</sup> Օրինակ, թիվ 1/09 ընտրատեղամասի ՏՀՀ անդամը (Ավան, Երեւան) դիմել է ԿՀՀ-ին արդյունքները չեղյալ համարելու համար, քանի որ հաշվարկի ընթացքում եղել են բազմաթիվ խախտումներ, նրա նկատմամբ արվել են սպառնալիքներ, որից հետո նա ստիպված է եղել ստորագրել չլրացված արձանագրությունը եւ ընտրատեղամասից դուրս է հանվել: ԿՀՀ ուղղակի խորհուրդ է տվել դիմել վերահաշվարկի համար, բայց չի հետաքննել չլրացված արձանագրությունը ստիպված ստորագրելու վերաբերյալ պնդումը: Այս ընտրատեղամասում պարոն Տեր-Պետրոսյանը ստացել է քվեների 1.8 տոկոսը՝ ի համեմատություն ԸՀՀ-ում գրանցված 25.54 միջին տոկոսի ցուցանիշի:

<sup>122</sup> Օրինակ, հարձակումներ ՏՀՀ անդամների, վստահված անձանց, լրագրողների, ՀԿ դիտորդների վրա թիվ 8/21, 13/16, 28/07 եւ 36/34 ընտրատեղամասերում:

<sup>123</sup> Թիվ 9/31 ՏՀՀ-ի նախագահը իրեն մեղավոր ճանաչեց ընտրությունների արդյունքների կեղծարարության մեջ, եւ դատապարտվեց երկու տարի ազատազրկման: Փետրվարի 29-ին Գլխավոր դատախազը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՌԱ-ին հայտնեց, որ պարոն Տեր-Պետրոսյանի Շիրակի նախընտրական շտաբի ղեկավարն իրեն մեղավոր է ճանաչել 10 ընտրատեղամասերում ընտրախախտումների վերաբերյալ կեղծ զեկույց ներկայացնելու մեջ:

<sup>124</sup> Ընտրական օրենսգրքի հոդված 40(6)-ի համաձայն «ՏՀՀ արդյունքների վերահաշվարկի դիմումներ կարելի է ներկայացնել համապատասխան ԸՀՀ մինչեւ ընտրությունների հաջորդ օրվա ժամը 14:00-ն», հոդված 40(5)-ի համաձայն ընտրական հանձնաժողովների որոշումները եւ այլն կարող են բողոքարկվել Վարչական դատարանում՝ բացառությամբ հոդված 40(6)-ում սահմանված վերահաշվարկի եւ հոդված 40(9)-ում սահմանված վերջնական արդյունքների բողոքարկման:

մերժման կամ թիվ 16 ԸԸՀ-ում վերահաշվարկի կարգի խախտման վերաբերյալ: Մեծամասամբ ԿԸՀ-ն պատասխանել է, որ այս դիմումները պետք է ուղարկել վարչական դատարան:

Հաշվի առնելով բողոքներին եւ դիմումներին վերաբերող իրավական դրույթների ոչ հստակությունը եւ նորաստեղծ վարչական դատարանի կառուցվածքին եւ վերջինիս կողմից ընտրական վեճերի քննության իրավասությանը հնարավոր անձանությունը՝ ԿԸՀ-ն կարող էր ավելին անել այս բողոքների պատշաճ քննարկումն ապահովելու համար, օրինակ բողոքները դատարան ուղարկելով եւ կազմակերպելով բողոքների արդյունավետ պաշտպանությունը: Ի վերջո, Վարչական դատարանում վերահաշվարկի ոչ մի բողոք չի գրանցվել եւ այն հետընտրական գործընթացում ընտրական բողոքների լուծման հարցում նշանակալի դեր չի խաղացել:

Փետրվարի 27-ին պարոն Կարապետյանը դիմել է Սահմանադրական դատարան՝ ընտրությունների արդյունքները չեղյալ համարելու հայցադիմումով<sup>125</sup>: Փետրվարի 29-ին դատարան է դիմել նաեւ պարոն Տեր-Պետրոսյանը: Նրա իրավաբանները պնդում էին, որ նախընտրական քարտզարշավի ընթացքում, ընտրությունների օրը եւ արդյունքների վերահաշվարկի ժամանակ եղած խախտումները այն չափի էին, որ անհրաժեշտ էր չեղյալ համարել ընտրությունների ընդհանուր արդյունքները<sup>126</sup>: Դատարանը միացրել է այս երկու գործերը եւ լսումներն անցկացրել մարտի 4-7-ը: Դատարանը որոշեց հաշվի չառնել այն բողոքները, որոնք առաջին հերթին չէին ներկայացվել Վարչական դատարան եւ, այդպիսով, չէին սպառել իրավական միջոցները, եւ իր ուշադրությունը սեւեռեց պարոն Տեր-Պետրոսյանի կողմից ներկայացված ՏԸՀ արձանագրությունների վրա:

Մարտի 8-ին դատարանը հաստատել էր ԿԸՀ որոշումն այն մասին, որ վարչապետ Սարգսյանը փետրվարի 19-ին ընտրվել էր նախագահ: Չնայած դատարանի վճիռը հատուկ անդրադարձ չի անում գործընթացի վրա քարտզարշավի խախտումների ունեցած ազդեցության մասին պարոն Տեր-Պետրոսյանի պնդումներին, այն քննադատում է ՀՈԱԽ-ին եւ ԿԸՀ-ին քարտզարշավը վերահսկելու իրենց իրավական պարտավորության չկատարման համար: Այնուամենայնիվ, այն գտել է, որ նրանց անգործությունը չի ազդել ընտրությունների արդյունքի վրա: Նմանապես, չնայած այն հաստատել է ՏԸՀ արձանագրությունների անճշտությունները, որոնք ուղարկվել են գլխավոր դատախազին, այն գտել է, որ դրանք բավարար չեն ընտրությունների արդյունքի վրա ազդելու համար: Դատարանը առաջարկել է վերանայել Ընտրական օրենսգրքի այն դրույթները, որոնք վերաբերում են ընտրական դիմումների եւ բողոքների ընդունմանը:

## Դ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Պարոն Տեր-Պետրոսյանը պնդում էր ընտրություններում «լայնատարած ընտրակեղծիքների եւ խախտումների» մասին, ինչպես նաեւ այն, որ ինքն է հաղթել ընտրություններում՝ թեեւ առանց հետագա որակավորման: Պարոն Բաղդասարյանը

<sup>125</sup> Միակ ներկայացված փաստաթուղթը ԸՄԴԱ Նախնական հայտնաբերումների եւ եզրակացությունների մասին հայտարարությունն էր:

<sup>126</sup> Նրա հայցադիմումը պարունակում էր անճշտություններ ունեցող ՏԸՀ արձանագրություններ: Այդուհանդերձ, նրա բողոքարկման մեջ ավելի շատ շեշտադրվում էին քարտզարշավի խախտումները (օրինակ՝ պնդումներ, որ վարչապետ Սարգսյանը օգտագործել է իր պաշտոնական դիրքը քարտզարշատի իրականացնելու համար եւ, որ նախագահ Քոչարյանը քարտզարշատն է ծավալել ընդդեմ պարոն Տեր-Պետրոսյանի), քան ՏԸՀ արդյունքների անճշտությունները:

նույնպես հարցականի տակ էր դնում ընտրությունների լեգիտիմությունը, մինչդեռ պարոն Հովհաննիսյանը<sup>127</sup> եւ պարոն Սանուկյանը վկայակոչում էին ընտրախախտումների մասին:

Դեռ մինչ ընտրությունների օրը պարոն Տեր-Պետրոսյանն իր աջակիցներին կոչ էր արել հավաքվել փետրվարի 20-ին «հաղթանակի» կամ «բողոքի» հանրահավաքի: Փետրվարի 21-ից մինչ մարտի 1-ի վաղ առավոտյան ցուցարարները կազմակերպել էին խաղաղ, թեւեւ ոչ պաշտոնապես արտոնված, հավաք (վրանների ճամբար) Ազատության հրապարակում Երեւանում եւ կազմակերպել են բազմաթիվ խաղաղ երթեր<sup>128</sup>: Հավաքի կազմակերպիչները հայտարարել են, որ իրենց նպատակն է հասնել ընտրությունների չեղյալ համարելուն եւ դրանց վերանցկացմանը: Մինչեւ մարտի 1-ը իշխանություններն, ընդհանուր առմամբ, հանդուրժեցին բողոքի անցկացումը:

Չնայած ընտրական գործընթացի վերաբերյալ գոյություն ունեցող հակասությանը, հիմնական հեռարձակող լրատվամիջոցները, այդ թվում նաեւ հանրային հեռուստատեսությունն ու ռադիոն, մեծապես արհամարհել են ընտրության արդյունքները վիճարկողների տեսակետները: Հ1-ը շարունակում էր ցուցադրել ցույցերի, պարոն Տեր-Պետրոսյանի գործունեության եւ ելույթի աղավաղված եւ միակողմանի լուսաբանում: Այն տրամադրում էր իշխանությունների կարծիքների լայնածավալ լուսաբանում եւ վարչապետ Սարգսյանի հանրահավաքների դրական լուսաբանում<sup>129</sup>: Որպես այդպիսին, այն չի իրականացրել Հեռարձակման մասին օրենքի հոդված 28-ի՝ օբյեկտիվության, անկողմնակալության եւ կարեւոր խնդիրների վերաբերյալ հասարակական կարծիքի իրազեկման իր իրավական պարտավորությունները:

Փետրվարի 23-ին նախագահ Քոչարյանը ընդդիմության գործունեությունը որակել է որպես «իշխանությունը զավթելու ոչ լեգիտիմ փորձ» եւ հայտարարել է, որ պատասխանը կլինի «վճռական եւ կտրուկ»: Հաջորդող օրերին պետական անվտանգության մարմինները կալանավորել են մի քանի անձանց՝ զենքի ապօրինի պահման, «իշխանության ներկայացուցչի նկատմամբ ֆիզիկական բռնության գործադրման» եւ «սուտ մատնության» կասկածներով:

Փետրվարի 26-ին Սերժ Սարգսյանը նախագահի մյուս թեկնածուներին կոչ է արել համագործակցել: Պարոն Գեղամյանը համագործակցության իր պատրաստակամություն է հայտնել դեռեւս պարոն Սարգսյանի համագործակցության հայտարարության կոչից առաջ: Չնայած ընտրությունների անցկացումը քննադատող իր ավելի վաղ արած հայտարարություններին, փետրվարի 29-ին պարոն Բաղդասարյանը ստորագրել է քաղաքական համագործակցության համաձայնագիր:

<sup>127</sup> Այդուհանդերձ, նրա կուսակցությունը՝ Դաշնակցությունը, այնուհետեւ հայտարարել է, որ չի վիճարկելու ընտրությունների արդյունքները:

<sup>128</sup> Պրն. Տեր-Պետրոսյանի շտաբը տեղեկացրել է Երևան քաղաքի իշխանություններին, որ փետրվարի 20-ին Երևանում անց է կացնելու հանրահավաք: Այնուամենայնիվ, նրանք Երևան քաղաքի իշխանություններին չեն տեղեկացրել Ազատության հրապարակում հաջորդած հավաքի և երթերի մասին:

<sup>129</sup> Հ1-ը չի լուսաբանել Երեւանում փետրվարի 26-ի պարոն Սարգսյանի հանրահավաքից հետո պարոն Տեր-Պետրոսյանի աջակիցների բազմամարդ երթը, մինչդեռ պարբերաբար լուսաբանել է Տեր-Պետրոսյանի տան մոտ կազմակերպվող փոքր ցույցերը:

Մարտի 1-ի առավոտյան Ազատության հրապարակում բռնություն է տեղի ունեցել ցուցարարների եւ ոստիկանության միջև, եւ հավաքը ցրվել է<sup>130</sup>: Պաշտոնական տեղեկատվության համաձայն վիրավորվել է 31 անձ (ոստիկաններ եւ ցուցարարներ): Ավելի ուշ նույն օրը ցուցարարները կրկին հավաքվել են, եւ անկարգություններ են տեղի ունեցել Ֆրանսիայի դեսպանատան եւ Երեւանի քաղաքապետարանի շրջակայքում: Վաղ կեսօրին այս տարածքում հավաքվել էր մի մեծ բազմություն: Երեկոյան տեղի են ունեցել լուրջ անկարգություններ. ոստիկանության ու անվտանգության ուժերը բախվել են ցուցարարների հետ, օգտագործվել են ավտոմատ զենքեր, պայթեցվել են պայթուցիկ սարքեր, հրկիզվել են մեքենաներ եւ տեղի է ունեցել թալան: Համաձայն պաշտոնական աղբյուրների՝ արդյունքում ցավալիորեն եղել են մահացության 8 դեպք, որն այնուհետեւ հասել է 10-ի, եւ 130 վիրավոր: Ժամը 22:30-ի մոտ նախագահ Քոչարյանը Երեւան քաղաքում հայտարարել է արտակարգ իրավիճակ, որն, ի թիվս այլ սահմանափակումների, արգելք էր դնում ցույցերի եւ հավաքների վրա<sup>131</sup>, եւ լրատվամիջոցների լուսաբանումը սահմանափակվում էր պաշտոնական տեղեկատվությամբ, այդպիսով, *de facto* պարտադրելով գրաքննություն<sup>132</sup>: Համաձայն պաշտոնական տեղեկատվության մարտի 19-ի դրությամբ կալանավորվել էին 106 անձ, որոնց մեղադրանք է ներկայացվել մարտի 1-ի դեպքերի առնչությամբ<sup>133</sup>:

Մարտի 21-ին արտակարգ իրավիճակը դադարեցվել է, եւ տեղի է ունեցել պարոն Տեր-Պետրոսյանի աջակիցների «լուռ բողոքի ակցիան»: Նույն օրը կոալիցիոն կառավարություն է կազմվել Հանրապետական, Բարգավաճ Հայաստան, ՀՅԴ Դաշնակցություն եւ Օրինաց երկիր կուսակցությունների կողմից՝ որպես խորհրդարանական ընդդիմություն թողնելով միայն Ժառանգություն կուսակցությունը: Ապրիլի 9-ին տեղի է ունեցել վարչապետ Սարգսյանի երդման արարողությունը Հայաստանի երրորդ նախագահի պաշտոնում:

## XVI. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>130</sup> Նույն օրն ավելի ուշ արված հայտարարության մեջ ոստիկանությունը նշել է, որ իրենք ցանկացել են տարածքի խուզարկություն իրականացնել, քանի որ ստացել էին տեղեկատվություն, համաձայն որի ցուցարարներին բաժանվելու էին զենքեր եւ պայթուցիկ նյութեր եւ որ տեղի էին ունենալու անկարգություններ: Ցուցարարներն այս հայտարարությունը հերքեցին: Տե՛ս 2008 թվականի մարտի 20-ի Եվրախորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարի զեկույցը՝ (CommDH(2008)11 <https://wcd.coe.int> կամ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2008 թվականի ապրիլի 25-ի զեկույցը 2008 թվականի փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների եւ հետընտրական զարգացումների վերաբերյալ՝ available at <http://ombuds.am/main/en/10/31/1389/>:

<sup>131</sup> Մարտի 17-ին Ազգային ժողովն ընդունեց « Ժողովներ, հանրահավաքներ, երթեր ու ցույցեր անցկացնելու մասին օրենքի» փոփոխությունները: Սա լուրջ մտահոգություն առաջացրեց ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի եւ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի մոտ, որոնք այս փոփոխություններն ընդունելի չհամարեցին: Ապրիլի կեսերին Հայաստանի Ազգային ժողովի հետ տարված խորհրդակցություններից հետո համաձայնություն ձեռք բերվեց օրենքի փոփոխություններն համապատասխան միջազգային չափանիշներին համապատասխանեցնու վերաբերյալ: Տե՛ս մամլո հաղորդակցությունը՝ [www.osce.org/odihr/item\\_1\\_30491.html](http://www.osce.org/odihr/item_1_30491.html) եւ մարտի 17-ի փոփոխությունների Միացյալ կարծիքի նախագիծը՝ [www.osce.org/documents/odihr/2008/04/30508\\_en.pdf](http://www.osce.org/documents/odihr/2008/04/30508_en.pdf):

<sup>132</sup> Մարտի 4-ին Լրատվամիջոցների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչը հանդես եկավ հայտարարությամբ, որում քննադատում էր լրատվամիջոցների սահմանափակումը: Մարտի 13-ին նախագահ Քոչարյանը փոփոխեց այդ դրույթները՝ միայն պաշտոնական տեղեկատվության հրապարակման փոխարեն ներմուծելով «արգելք բացահայտ կեղծ տեղեկատվության հրապարակման վրա»:

<sup>133</sup> Տե՛ս Գլխավոր դատախազության մամլո հաղորդագրությունը՝ <http://www.genproc.am/main/en/121/3793/>:



ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Հայաստանի Հանրապետության իշխանությունների քննարկմանն է ներկայացնում հետևյալ առաջարկությունները՝ ԵԱՀԿ պարտավորություններին ընտրական գործընթացի համապատասխանությունը ավելացնելու նպատակով: Մրանք չեն կրկնում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ նախորդ զեկույցներում կամ գնահատումներում արված առաջարկությունները, որոնց մի մասը դեռ չի իրականացվել եւ շարունակում է մնալ վավերական:

Ընդհանրապես, ժողովրդավարական ընտրությունների անցկացման համար պահանջվում է իրական քաղաքական կամքի դրսևորում գործընթացի բոլոր մակարդակներում՝ ԵԱՀԿ համապատասխան պարտավորությունների եւ այլ չափանիշների՝ որոնք ազատ կերպով ստանձնել է Հայաստանի Հանրապետությունը, իրականացման համար:

## Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ

1. Պետական եւ ընտրական իշխանությունները պետք է լրջորեն հասցեագրեն ընտրական գործընթացի հանդեպ հանրության ունեցած վստահության ակնհայտ պակասը եւ ներմուծեն միջոցներ, որ կապահովեն բոլոր քաղաքացիների՝ հարկադրումից կամ ահաբեկման որեւէ տարբերակից զերծ քվեարկումը: Այս առումով օգտակար կարող են լինել հանրության իրազեկման միջոցառումների ուժգնացումը եւ նպատակային ուսուցողական ծրագրերը, օրինակ՝ տեղական ինքնակառավարման կառույցների համար:
2. Պետական իշխանությունները չպետք է հանդուրժեն քվեների առքն ու վաճառքը եւ միջոցներ գործադրեն դրանք վերացնելու ուղղությամբ:

## Բ. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

3. Օրենսգիրքը պետք է փոփոխել, որպեսզի երկքաղաքացիություն ունեցող քաղաքացիներն ունենան հավասար ընտրական ակտիվ եւ պասսիվ իրավունքներ: Հարկավոր է վերանայել երկքաղաքացիների՝ որպես նախագահ ընտրվելու արգելքը:

## Գ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Ընտրական օրենսգիրքը պետք է արդարացի ներկայացուցչություն ապահովի ԸԸՀ եւ ՏԸՀ ղեկավար պաշտոններում (նախագահ, փոխնախագահ եւ քարտուղար) այն կուսակցությունների եւ հաստատությունների համար, որոնք իրավասու են ընտրական հանձնաժողովներում անդամնե առաջադրել:
5. ԿԸՀ որոշումների կարգավիճակը, այն է՝ արդյոք դրանք «վարչական որոշումներ» են, պետք է հստակեցվի:
6. ԿԸՀ պետք է ուսուցողական ձեռնարկ մշակի թեկնածուների վստահված անձանց համար՝ նրանց իրավունքներին ու պարտականություններին նվիրված:

## Դ. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

7. Թափանցիկության ավելացման նպատակով ոստիկանությունից պետք է պահանջել իրենց փաստացի բնակության վայրում քվեարկելու համար գրանցված անձանց թվի պարբերական հրապարակում:

## Ե. ՆԱԽՐԱՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆ

8. Հարկավոր է հստակ տարանջատում մտցնել պետական կառույցների եւ իշխող կուսակցության միջեւ: Քարոզարշավային անհավասար պայմանների ի հայտ գալու հնարավորությունը նվազեցնելու համար օրենսդրությունը պետք է՝

- Հստակ սահմանի, թե ինչ պայմաններում պետական եւ տեղական ինքնակառավարման պաշտոնյաները կարող են լեզիտիմ կերպով ներգրավված լինել թեկնածուի քարոզարշավում: Խորհուրդ է տրվում պահանջել, որ մարզպետները, նախարարները, պետական եւ տեղական ինքնակառավարման պաշտոնյաները պաշտոնապես արձակուրդ գնան, եթե պետք է մասնակցեն թեկնածուի կամ կուսակցության օգտին տարվող նախընտրական քարոզչության:
- Արգելի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների շինություններում տեղակայված որեւէ կուսակցության գրասենյակի օգտագործումը թեկնածուի քարոզարշավի կազմակերպման կամ ծավալման նպատակներով:
- Արգելի քարոզչական նյութերի ցուցադրումը հանրային սեփականություն հանդիսացող վայրերում (տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակ, հիվանդանոց, դպրոց եւ այլն), բացառությամբ հատուկ այդ նպատակի համար հատկացված վայրերի:

9. Ընտրական օրենսգիրքը պետք է ավելի հստակ սահմանի, թե արդյոք «քաղաքական հայեցողական պաշտոններ» զբաղեղնող անձինք պետք է նախընտրական քարոզարշավի շրջանում պաշտոնապես արձակուրդ վերցնեն: Եթե այդ անձանց թույլատրվում է շարունակել պաշտոնավարությունը որպես թեկնածու գրանցումից հետո, ապա պետք է մշակվեն օրենքով սահմանված ուղեցույցներ, որոնք հստակ կսահմանեն, թե գործունեության որ տեսակն է որակվում որպես «քարոզչություն պաշտոնական պարտականություններն իրականացնելիս» եւ «ընտրական առավելություն ստանալու նպատակով պաշտոնի չարաշահում»:

10. Քարոզչական պաստառների ցուցադրման համար հատկացված վայրերը պետք է տրամադրվեն «անվճար հիմունքներով», եւ համալսարանի ղեկավարությունը պետք է համապատասխան ԸԸՀ-ին տեղեկացնի այս վայրերի մասին:

11. Տեղական ինքնակառավարման մարմինների սեփականություն հանդիսացող դահլիճներն ու այլ տարածքները, որ կարող են ծառայել որպես քարոզարշավի անցկացման վայրեր, պետք է մատչելի լինեն նույն հիմունքներով, ինչ պետական սեփականություն հանդիսացողները՝ Ընտրական օրենսգրքի հոդված 18(1):

12. Օրենքում հաստատված լինելով թեկնածուներին լրատվամիջոցների կողմից՝ անկախ նրանց սեփականության ձեւից, հավասար պայմանների ապահովման սկզբունքը՝ հարկավոր է պարտավորեցնել, որպեսզի այն գովազդային ընկերությունները, որ տնօրինում կամ որոնց սեփականություն են հանդիսանում գովազդային վահանակները, դրանք թեկնածուներին տրամադրեն հավասարության սկզբունքով եւ ԿԸՀ-ին տեղեկացնեն դրանց օգտագործման քանակների վերաբերյալ:

**Ձ. ՔԱՐՈՋԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ**

13. Օրենսգիրքը պետք է սահմանի «նյութական ապրանքների» նվիրատվությունները: Թեկնածուները պետք է «նյութական» նվիրատվությունները ներառեն քարոզչական ծախսերի հաշվետվության մեջ՝ համապատասխան դրանց իրական շուկայական արժեքի: Ընտրական օրենսգիրքը պետք է մանրամասնի, թե ծախսերի որ տեսակները պետք է ներառվեն թեկնածուների քարոզչական հաշվետվություններում: Թեկնածուները պետք է ԿԸՀ-ին տեղեկացնեն գովազդային վահանակների վրա ունեցած քարոզչական պաստառների քանակի, դրանց գտնման վայրերի, արժեքի, ինչպես նաև լրատվամիջոցներում տրվող վճարովի գովազդների քանակի մասին:

**Է. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ**

14. Լրատվամիջոցների ազատությունը եւ անկախությունը հարկավոր է հարգել: Իշխանությունները պետք է մշտապես զերծ մնան լրատվամիջոցների եւ լրագրողների գործունեության միջամտությունից, քանզի դա վնաս է հասցնում նրանց անկախությանը:

15. Ներառականությունն ավելացնելու նպատակով Հեռուստա եւ ռադիո հեռարձակման մասին օրենքը պետք է ավելի բազմազան անդամություն նախատեսի ՀՌԱԽ-ի համար, օրինակ՝ ներգրավելով ոլորտի մասնագետների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների:

16. Հանրային հեռարձակողի գործունեությունը կարելի է ընդլայնել հետեւյալ կերպ՝

- Պակասեցնել պետության դերը նրա ղեկավար խորհրդի նշանակումների գործում,
- Ընդլայնել Հանրային հեռուստատեսության եւ ռադիոյի խորհրդի կազմը՝ հնարավորություն ընձեռելով ավելի շատ քաղաքական կուսակցությունների եւ անկուսակցական խմբերի առաջադրել անդամներ:
- Ջարգացնել չեզոք, օբյեկտիվ եւ տեղեկատվական խմբագրական դիրքորոշում բոլոր ծրագրերի համար եւ խստիվ համապատասխանել իրավական դրույթներին,
- Ընտրողներին տրամադրել ընտրական տեղեկատվություն ավելի լայն շրջանակ՝ օգտագործելով ավելի բազմազան ֆորմատներ:

17. Լրատվամիջոցներին առնչվող բողոքների ընթացակարգերը պետք է ապահովեն ավելի մեծ թափանցիկություն ու բարելավեն մասնակիցների եւ հանրության հասանելիությունը: Հարկավոր է նկատի ունենալ համապատասխան դրույթները միացումը մեկ իրավական ակտի մեջ: Երկու մարմինների լրատվամիջոցների վերաբերյալ բողոքների վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքի շնորհումը որոշ շփոթումն էր առաջացնում իրավասության առնչությամբ: Հետեւապես, ՀՌԱԽ-ը պետք է հանդիսանա կիրառելի իրավական դրույթներին լրատվամիջոցների ընդհանուր համապատասխանությունը վերահսկող միակ մարմինը:

18. Հանրային լրատվամիջոցներով թեկնածուների քարոզարշավի համար անվճար տրամադրվող եթերաժամը պետք է լինի երեկոյան գլխավոր լուրերի թողարկումից հետո, այդպիսով մեծացնելով ընտրողների թեկնածուների տեսակետներին ծանոթանալու հնարավորությունը:

**Ը. ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ**

19. Նախընտրական քարոզչության շրջանում թեկնածուներին (կամ նրանց անունից գործող անձանց) քաղաքացիներին փող, ապրանքներ կամ ծառայություններ խոստանալու վրա եղած արգելքը պետք է տարածվի նաեւ ընտրության օրվա եւ դրան նախորդող օրվա վրա:
20. Հարկավոր է մշակել բազմակի քվեարկության կանխարգելման այլընտրանքային մեխանիզմ: Մտահոգիչ է այն, որ ընտրողների անձնագրերի կնքումը մշտական հետք է թողնում քաղաքացիների՝ որպես ընտրող մասնակցության վերաբերյալ, եւ կարող է այդքան էլ արդյունավետ չլինել բազմակի քվեարկության կանխարգելման հարցում:
21. Ներկայումս, բացառությամբ հիվանդանոցներում գտնվող անձանց, բոլոր քաղաքացիները, ովքեր ցանկանում են ընտրել, պետք է ներկայանան ընտրատեղամաս եւ քվեարկեն: Ոչ մի դրույթով չի կարգավորվում տնային տեղաշարժման սահմանափակումներ ունեցող ընտրողներին քվեարկության այլընտրանքային տարբերակի առաջարկումը: Հարկավոր է ներմուծել մի համակարգ, որ հնարավորություն կտա բոլոր ընտրողներին իրագործել իրենց ընտրական իրավունքը եւ քվեարկել արժանապատվությամբ: Ցանկացած ընթացակարգ պետք է ապահովի թափանցիկություն, քվեի գաղտնիություն եւ քվեաթերթիկի անվտանգություն:
22. Ընտրատեղամասերում ծառայության մեջ գտնվող ոստիկանների Ընտրական օրենսգրքի դրույթների կիրառման պարտականությունը պետք է հստակեցվի (օրինակ ընտրատեղամասերից դուրս քարոզչության արգելքի, ընտրությունների օրը ընտրատեղամասի տարածքում՝ 50 մետր շառավղով խմբերի հավաքման վերաբերյալ): Հարկավոր է նախաձեռնել ոստիկանների ուսուցում՝ ընտրությունների օրն իրենց պարտականությունների վերաբերյալ:
23. Զինվորականների՝ քվեարկելու կամ չքվեարկելու ընտրության իրավունքը պետք է ապահովվի գործնականում: Այս առումով, ԿԸՀ կարող է նկատի առնել զինվորական ընտրողներին ուղղված տեղեկատվական քարոզարշավի իրականացում:
24. Թափանցիկության բարձրացման նպատակով ՏԸՀ արձանագրությունները պետք է պարունակեն առանձին տողեր՝ հիմնական ցուցակում գրանցված ընտրողների թիվը, այլ լրացուցիչ ցուցակներում գրանցված ընտրողների թիվը, եւ ընտրությունների օրը գրանցված ընտրողների թիվը:
25. Ընտրական օրենսգիրքը պետք է ԸԸՀ-ներին ուղեցույց տա այն դեպքերի համար, երբ ընտրական նյութերը ժամանում են չկնքված փաթեթներում:
26. Բոլոր ԸԸՀ-ները պետք է նույն ընթացակարգերին հետեւեն արդյունքների ցանցային համակարգի մեջ արդյունքները մուտքագրելիս:

**Թ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ**

27. Վերահաշվարկի պահանջ ներկայացնելու վերջնաժամկետը հարկավոր է երկարացնել մինչեւ ընտրությունների հաջորդ օրվա ժամը 18.00-ն: Պետք է արգելվի վերահաշվարկի պահանջի գրանցումը մինչ ՏԸՀ հաշվարկի ավարտը: Եթե ԸԸՀ-ն

մերժում է վերահաշվարկի պահանջը, այն պետք է կայացնի պաշտոնական որոշում: Բոլոր պահանջված վերահաշվարկների կատարումն ապահովելու համար կարող է անհրաժեշտություն առաջանալ այդ գործողությունն իրականացնելու համար տրված ժամկետը երկարաձգել կամ ուղղել դրանք ընդհանուր իրավասության դատարաններ:

#### Ժ. ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՒ ԲՈՂՈՔՆԵՐ

28. Հարկավոր է իրագործել Սահմանադրական դատարանի առաջարկությունը ընտրական բողոքների վերանայման գործընթացի վերաբերյալ: Դիմումների եւ բողոքների ընթացակարգերը պետք է լինեն հստակ եւ մանրամասն՝ ներառելով տարաբաժանում, թե որ ընտրական հանձնաժողովներն ու դատարաններն ունեն իրավասություն, ինչպես նաեւ պարզաբանում, թե որտեղ պետք է առաջին հերթին ներկայացվի բողոքը: Հստակ պետք է սահմանվի ցանկացած որոշում ավելի բարձր մակարդակի ընտրական հանձնաժողով կամ դատարան բողոքարկելու իրավունքը:
29. Ընտրական օրենսգիրքը պետք է ԿԸՀ-ին պարտավորեցնի հստակ փաստացի բացահայտումներ ունենալ յուրաքանչյուր բողոքի համար, հակիրճ նկարագրի ինչ քայլեր եւ միջոցառումներ են ձեռնարկվել բողոքը հետաքննելու համար, եւ բացատրի բողոքն ընդունելու կամ մերժելու (լիովին կամ մասամբ), ինչպես նաեւ այլ հայտնաբերումներ կամ առաջարկություններ անելու պատճառները:
30. Ընտրական օրենսգիրքը պետք է փոփոխվի, որպեսզի ԿԸՀ-ն չհրապարակի վերջնական արդյունքները մինչեւ բոլոր բողոքարկման վերջնաժամկետները չսպառվեն եւ համապատասխան դատարանի կողմից չքննվեն բոլոր բողոքարկումները: Ընտրության արդյունքների իրավական բողոքարկումների ժամկետները պետք է փոփոխվեն, որպեսզի առաջին փուլից հետո ներկայացված բողոքարկման վերաբերյալ վճիռ կայացվի մինչեւ հնարավոր երկրորդ փուլի կայացումը:
31. Ընտրական օրենսգիրքը պետք է մասնավորեցնի որ ընտրախախտումներն են համարվում «քրեական», իսկ որոնք «վարչական»: Այս առումով, պետք է համապատասխանություն լինի Ընտրական օրենսգրքի, Քրեական օրենսգրքի եւ Վարչական դատավարության օրենսգրքի միջեւ:

## ՀԱՎԵԼՎԱԾ՝ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հետևյալ տեղեկատվությունը վերցվել է ԿԸՀ վերջնական արդյունքների արձանագրությունից:

Միավոր	Քանակ
Ընտրության մասնակիցներ	1.671.027
Հատկավցած քվեաթերթիկներ	2.390.000
Սարված քվեաթերթիկներ	720.303
Անվավեր քվեաթերթիկներ	35.798
Օգտագործված քվեաթերթիկներ	1.669.678
Վավեր քվեաթերթիկներ	1.632.666
Քվեատուփում եղած ծրարներ	1.667.995
«Անճշտություններ»	6.720
<b>ԹԵՎԸՆՏՈՒՆԵՐԻ ՔՎԵՆԵՐԸ</b>	
Արթուր Բաղդասարյան	272.427
Արտաշես Գեղամյան	7.524
Տիգրան Կարապետյան	9.792
Արամ Հարությունյան	2.892
Վահան Հովհաննիսյան	100.966
Վազգեն Մանուկյան	21.075
Արման Մելիքյան	4.399
Սերժ Սարգսյան	862.369
Լևոն Տեր-Պետրոսյան	351.222

Տոկոս
16.69%
0.46%
0.60%
0.18%
6.18%
1.29%
0.27%
52.82%
21.51%

## ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ՄԱՍԻՆ

Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) ԵԱՀԿ-ի այն հիմնական կառույցն է, որն աջակցում է մասնակից պետություններին՝ “ապահովելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ լիարժեք հարգանք, հետևելու օրենքի գերակայությանը, տարածելու ժողովրդավարության սկզբունքները և (...) կառուցելու, ամրապնդելու և պաշտպանելու ժողովրդավարական հաստատությունները, ինչպես նաև հանդուրժողականություն սերմանելու ողջ հասարակության մեջ” (1992 թ. Հենսինկյան գազաթաժողովի փաստաթուղթ): Դա կոչվում է ԵԱՀԿ-ի գործունեության “մարդկային” տարածաչափ (“human dimension”):

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը, որը գտնվում է Վարշավայում (Լեհաստան), ստեղծվել է 1990 թվականի Փարիզյան գազաթաժողովում՝ որպես Ազատ ընտրությունների գրասենյակ, և սկսել է գործել 1991 թ. մայիսից: Մեկ տարի անց Գրասենյակը վերանվանվել է՝ նոր անվանման մեջ արտացոլելու արդեն ընդլայնված լիազորությունների շրջանակը, որը ներառել է նաև մարդու իրավունքները և ժողովրդավարացումը: Այսօր ԺՀՄԻԳ-ն ունի ավելի քան 130 աշխատակից:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը Եվրոպայում առաջատար կազմակերպությունն է **ընտրությունների դիտարկման** ոլորտում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը յուրաքանչյուր տարի համակարգում և կազմակերպում է հազարավոր դիտորդների ուղարկումը տարբեր պետություններ՝ գնահատելու ԵԱՀԿ-ի տարածաշրջանում անցկացվող ընտրությունների համապատասխանությունը ԵԱՀԿ-ի նկատմամբ ստանձնած պարտավորություններին, ժողովրդավարական ընտրությունների այլ միջազգային չափանիշներին և ազգային օրենսդրության պահանջներին: Նրա յուրահատուկ մեթոդաբանությունն ապահովում է ողջ ընտրական գործընթացի խորը ուսումնասիրություն: Աջակցության ծրագրերի միջոցով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն օգնում է մասնակից պետություններին բարելավել իրենց ընտրական համակարգը:

**Ժողովրդավարացման** ոլորտում Գրասենյակի աշխատանքները ներառում են. իրավունքի գերակայություն, օրենսդրական աջակցություն, ժողովրդավարական կառավարում, միգրացիա, տեղաշարժի ազատություն և գենդերային հավասարություն: Ամեն տարի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նպատակային աջակցության մի շարք ծրագրեր է իրականացնում՝ նպաստելու ժողովրդավարական կառույցների զարգացմանը:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նաև աջակցում է մասնակից պետություններին՝ կատարելու իրենց պարտավորությունները մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում, ԵԱՀԿ-ի գործունեության “մարդկային” տարածաչափի շրջանակներում ստանձնած պարտավորություններին համահունչ: Այդ խնդրին հասնելու համար ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն աշխատում է տարբեր գործընկերների հետ և սերտացնում համագործակցությունը, զարգացնում կարողությունները և մասնագիտական փորձ և գիտելիքներ հաղորդում տարբեր թեմատիկ ոլորտներում, ներառյալ մարդու իրավունքներն ահաբեկչության դեմ պայքարում, թրաֆիքինգի ենթարկված մարդկանց մարդու իրավունքների պաշտպանության բարելավումը, մարդու իրավունքների ուսուցում եւ վերապատրաստում, մարդու իրավունքների մոնիտորինգ եւ հաշվետվությունների ներկայացում, ինչպես նաև կանանց իրավունքներ եւ անվտանգություն:

**Հանդուրժողականության** եւ խտրականության դեմ պայքարի ոլորտում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ մասնակից պետություններին աջակցություն է ցուցաբերում աստելության հողի վրա

հանցանքների եւ ռասիզմի, քսենոֆոբիայի, անտիսեմիտիզմի եւ անհանդուրժողականության այլ ձևերին պատասխան միջոցառումներում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի գործունեությունը հանդուրժողականության ապահովման և խտրականության դեմ պայքարի ոլորտներում կենտրոնացած է հետևյալ ուղղություններով. օրենսդրություն, իրավապահ մարմինների վերապատրաստում, ատելության հողի վրա կատարված հանցանքների և նման այլ դրսևորումների մոնիտորինգ, հաշվետվությունների ներկայացում և պայքարի միջոցառումների դիտարկում, ինչպես նաև կրթական միջոցառումներ, որոնց նպատակն է հանդուրժողականություն, հարգանք և փոխըմբռնում սերմանել:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը մասնակից պետություններին խորհուրդներ է տրամադրում ռոմաների և սինթիների նկատմամբ նրանց քաղաքականության վերաբերյալ: Գրասենյակը նպաստում է ռոմա և սինթի համայնքների կարողությունների զարգացմանը և նրանց միջև ցանցային կապերի խորացմանը, ինչպես նաև՝ խրախուսում ռոմաների և սինթիների ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքականության համար պատասխանատու մարմիններին:

ԺՀՄԻԳ-ի ողջ գործունեությունն իրականացվում է ԵԱՀԿ-ի մասնակից պետությունների, ԵԱՀԿ-ի կառույցների և տարբեր պետություններում ԵԱՀԿ-ի գրասենյակների, ինչպես նաև այլ միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցության և համակարգման պայմաններում:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ԺՀՄԻԳ կայքից ([www.osce.org/odihr](http://www.osce.org/odihr)):